

Հ. Ա. Ա. Մ. Պ. Ա.

1635


ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ




Ա. ԳԻՐՔ



ՀԻՆ ԴԱՐԵՐ



Յպարք Ս. Ա. Վ. - Մասրուզ, Գյումրի,
1985



Հ. ԱՃԵՄԵԱՆ

Արքայի կ. Ռ. ԽԵՂԱՋԱԿԻ
ԽԵՂԱՋԱԿԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ
Հ-10-35 Հ. ԽԵՂԱՋԱԿԻ

1635


ՀԱՅՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ԳԻՐՔ

ՀԻՆ ԴԱՐԵՐ



1935
ՅՊԱՐՍԽ ՍՊԱԾԱԿ-ՄԽՄՐՈՎ
Պահիրէ



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Դասագիրքիս այս շարքը կը հրատարակուի զգացուած
պէսքի մը զոհացում տալու նպատակաւ:

Արդարեւ, գաղուրանայ ամէն անկիւնէ ազգային
պատմութեան յարմար դասագիրքի մը պահանջը կը
բարձրանայ երկար ատենէ ի վեր:

Զեմ յաւակնիր թէ դասագիրքերուս այս շարքը,
զերծ ամէն թերութենէ, պիտի ըլլայ կատարեալ զործ մը,
բայց իրնամ ըստ թէ ան օժտուած է շարք մը առաւել-
լուրիւններով:

Նախ, չեմ նետեւած հին մեղոտին, մեր ազգին պատ-
մութեան սկիզբը տանելով մինչեւ ջրնեղեղը: Ես զի-
տակցաբար մէկ կողմ բողած եմ «Աւանդական» ըսուած
մասը, որ բայ իս պէսք է աւանդուի դպրոցներու խո-
նարհազոյն կարգերու մէջ, ու շատ եսքի պէսք է ձգուի
անոնց ուսումնասիրութիւնը մեր ցեղային կարգ մը
յատկանիւերը երեւան բերելու համար:

Ես նետեւած եմ, ուրեմն, իրական պատմութեան:

Երկրորդ, զգուշացած եմ խնողումէ, աւելորդաբա-
նութենէ եւ նառէ, աւելի դիւրըմբռնելի դարձնելու հա-
մար նիւրը:

Երրորդ, ջանացած եմ նիւրը վեր առնել օրջան
առ օրջան, տալով գլխաւոր եւ յատկանօտական դէմքերն

դեպքերը, այս վերջնոյն մեջ դնելով պատճառի եւ արդիւնքի կապակցութիւնը:

Չորրորդ, զանացած եմ որ լեզուն ըլլայ պարզ դիւրասահ եւ հասկնալի:

Դասագիրքերուս այս շարքը աշակերտին համար է եւ ոչ թէ ուսուցչին: Ուսուցիչը պէսք է զիտնայ աւելին հոս մեջ բերուածեն, որպէսզի դասը կարենայ լնծայել հետաքրքրական եւ բազմակողմանի: Հոս կարելի չէր մեջ բերել ամեն ինչ, ոչինչ ձգելով ուսուցչին:

Այս առաջին գիրքը կը սկսի նախաճայատանին ու կը հասնի մինչեւ Արշակունիներու, այլ խօսքով Հին Դարերու վերջը: Դասերու բաժանումը ըրած եմ շաբարական մեկ պահի հաւուով:

Դասագիրքիս երկրորդը պիտի պարունակի: Մարզպաններու օրջանեն մինչեւ Ռուբիննեաններու անկումը տեղող օրջանը, այսինքն Միջին Դարերը:

Իսկ երրորդ հատորը՝ Նոր Դարերը, եւ Ժամանակակից օրջանը, մինչեւ մեր օրերը՝ մօսաւոր բաժանումով, ընդարձակ ուսումնասիրութեամբ եւ նոր լոյսերու տակ:

Հստ որում գաղութահայ դպրոցներու ծրագիրները յանախ բնաւ նմանութեան եզրեր չունին իշարու նիս, կարելի չէ որուապէս բաել թէ ո՞ր դասագիրքը, որ կարգին յարմար է: Ներկայս սակայն կրնայ պատճենի նախակրարանի Միջին Ա. դասարաններուն:

Հսի թէ անկարելի է որ այս աշխատութիւնը զուրկ չըլլայ առաւել կամ նուազ թերութիւններէ: Ուստի, երախտապարտ պիտի մնամ պատճենակիցներուս, եթէ նախին իրենց դիտողութիւնները նազորդել ինձի:



ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.

ԴԱՍ Ա.

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԵՐԵ ԱՌԱՋ

ՆԱԽԻՐ — ՌԻՐԱՐՑՈՒ

Հայաստան միշտ հայերով բնակուած չէ եղեր։ Մեր ազգի բուն պատմութենէն շատ դարեր առաջ մեր երկրին մէջ կը բնակէր ժողովուրդ մը որ կը կոչուէր Նախը—Ռւրաբասացի։ Անոնք յաղթանդամ ու կտրիճ մարդիկ էին, աղղակից Վրացիներուն և Հիթիթներուն։ Բայց Նախը—Ռւրաբասացի ժողովուրդը ինքզինքը կը կոչէր Խալտի, իր մեծ աստծոյն՝ Խալտիսի անունով։

Բաժանումներ. — Սակայն երբ կ'ըսենք Նախը—Ռւրաբասացւոց երկիր, ոլէտք չէ կարծել

թէ ան մէկ երկիր էր։ Բեւեռաղիր արձանա-
զրութիւններէ ստուգուած է թէ Նախր—Ռւրար-
տուն բաժնուած էր իրարու դաշնակից եօթը
պետութիւններու, որոնք են։—

1. Ռւրարտու = Արարատեան նահանգ.
2. Բիանա = Վանի շրջանակ.
3. Միննի = Վանայ և Ռւրմիոյ Լիճերուն
մէջտեղը.
4. Մուսափր = Մուշի շրջանակը.
5. Միլսիս = Բարձր Հայք.
6. Նախրի = Վանայ Լիճին հարաւը.
7. Մելիս = Մելիտինէ, Մալաթիա։

Այս երկիրներուն տէրերը նախապէս իրարու-
հետ շատ բարեկամ չէին, բայց կամաց կամաց
զօրացաւ Ռւրարտուն և միւս թագաւորութիւն-
ները իրեն դաշնակից դարձնելով, միասին եր-
կար ատեն պատերազմեցան ասորական հղոր
կայսրութեան դէմ։

Ժողովուրդը եւ հաղաքակրթութիւնը .—
Նախր—Ռւրարտացիք, ուրեմն, մէկ ժողովուրդ-
էին, ունէին միատեսակ լեզու, միատեսակ կրօնք
և սովորութիւններ։ Կային, սակայն, երեք դա-
սակարգեր, որոնք են բուրմեր, ազնուականներ
եւ բուն ժողովուրդը։

Քուրմերը դիտուն և ճարպիկ մարդիկ էին.
Կրօնաւոր էին, նաև դատաւոր, բժիշկ, աստղա-
բաշխ և այլն :

Աղնուականները հողատէրերն էին և իշխա-
նութիւնն ալ իրենց կը պատկանէր:

Իսկ ժողովուրդը, որ մեծամասնութիւնը կը
կտղմէր, թշուառ զիւղացիներէ կը բաղկանար, որոնք
օրին ի բուն սկիտի աշխատէին հողատէրին համար :

Նախը — Ռւրարտուի մէջ կային քաղաքներ
որոնց բնակիչները արհեստներով և առետուրով
ալ կը զբաղէին: Արձանագործութիւն, զինազոր-
ծութիւն, բերդեր և ջրանցքներ շինելու արուես-
տը առաջ զացած էր իրենց մէջ:

Կրօնիք. — Ռւրարտական կրօնքը վախի վրայ
հանուասուած չէր, այլ լոյսի դաղափարին վրայ:
Իրենց զլխաւոր աստուածներն էին. —

Խալթիս, որ էր լոյսի աստուածը,

Տէիսրաս, երկնքի աստուածը,

Արտինիս, արեգակ աստուածը.


Կային տակաւին բազմաթիւ ուրիշ աստուա-
ծութիւններ, որոնք ունէին իրենց մեհեանները,
շքեղ կերպով կառուցուած շէնքեր, որոնց աւե-
րակները դեռ չեն պեղուած:

ԴԱՍ Բ.

ՆԱԻՐ - ՈՒՐԱՐՏԱՑԻՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Ասորեստանի եւ Նաիր - Ռւրաբուլի կռիւները . — Քրիստոսէ 1410 տարի առաջ, Ասորեստանի թագաւորն էր Ասուր - ու - Բալիդ որ Նաիր - Ռւրաբառուի վրայ արշաւած է և իր արձա-



Նաղրութիւններուն մէջ յիշած է այս երկրին անունը, Անկէ առաջ ի՞նչ եղած էր Նաիր - Ռւրաբառն, որոշ տեղեկութիւններ չունինք:

Սաղմանասար Ա. նորէն արշաւելով Նախրիի
վրայ տիրեր է անոր մէկ մասին։ Իսկ Թագ-
դաթ—Փաղ—Ասար հզօր թաղաւորը երեք անդամ
արշաւեր և մեծամեծ վնասներ տուեր է։ Հակա-
ռակ ասոր սակայն. ան չկրցաւ տկարացնել
Նախր—Ռուբարտուն, բնդհակառակիր, իր երկիրը
տկարացու և Նախր—Ռուբարտուն երկու հարիսոր
տարիի չտի խաղաղ ապրեցաւ։

885ին Ասորեստանի թաղաւոր կ'ըլլոյ Ասուր-
Նաղիր-Արտուր, որ չորս անդամ կ'արշաւէ Նախրիի
վրայ և մեծամեծ անդթութիւններ կը գործէ։
Ենք արձանադրած է իր ըրածները, որոնց եթէ
հաւատանք ա'լ մարդ մնացած պիտի չըլլար
Նախրիի մէջ։

Արամէ. — Բայց ահա մէջտեղ կ'ելլէ Ռւ-
բարտուի թաղաւորը քաջն Արամէ, որ կը հիմնէ
թաղաւորական նոր հարատութիւն մը՝ Արամեան
Հարաստութիւն անունով։ Ասորեստանի Սաղմա-
մանասար Բ. թաղաւորը երեք անդամ իր գէմ
պատերազմի կուզայ, բայց Արամէ միշտ քաջա-
րար կը դիմադրէ։ Ասորեստանի այս թաղաւորն
ալ մեծ զովասանքներով կը խօսի իր տարած
յաղթանակներու մասին, բայց ասիկա Ասորեստա-
նի թաղաւորներու սովորութիւնն էր։

Արամէի հիմնած թագաւորութիւնը տեւեց երկու հարիւր ութսուն տարի, մինչև Ք.Ա. 580 թուականը:

Այս նոր շրջանը կրնանք բաժնել երկու մասի. առաջինը՝ մեծութեան, հզօրութեան և յաջողութիւններու շրջան, երկրորդը (724էն յետոյ) տկարացման և անկման շրջան, որ վերջացաւ Արմէններու արշաւանքովը:

Առաջին շրջանին մէջ Ռւբարտուի թագաւորները իրենց միացուցին նախիրին և դաշնակից ըրին միւս թագաւորութիւնները ու կարողացան մեծ պատերազմներ մղել ասորեստանցւոց դէմ, և երրեմն նոյնիսկ անոնց երկիրները արշաւել:

Ասորական հզօր կայորութեան ամենամեծ թշնամիները նախր—Ռւբարտուցիները եղած են:

Արամէի յաջորդներուն մէջ նշանառուներն են: Մենուաս, Արդիստիս Ա., Սարգուրիս Բ. և Ռուսաս Բ.:



Մասն Բ.

ԴԱՍ Գ.

ՀԱՅՈՅ ԾԱԳՈՒԽՄԸ


ՄԵՐ աւանդուկան պատմութեան համաձայն
 Հայերը եկած են Միջագետքի կողմերէն։ Սա-
 կոյն զիանականները այսօր այն կարծիքէն են
 թէ Հայերը եկած են Եւրոպայէն եւ ցեղակից
 են Եւրոպացիններուն։ Անոնք շատ դանդաղ կեր-
 պով անցեր են Մարմարա և Եղէական ծովերու
 վրայէն դէպի Փոքր Ասիսյ կողմը, երկար ժա-
 մանակ ապրեր են Փռիւզիա ըստած երկիրը
 Փռիւզիացիններու հետ, յետոյ, նեղուելով դրացի
 ժողովուրդներէն, Քրիստոնէ 8—10 դար առաջ
 անցեր են Ալիս գետի արեւելեան կողմը և բնա-
 կեր Կապադովիլիա։ Սակայն հոն ալ Հրձակայ
 ժողովուրդները հանդիսաւ չեն տուած անոնց և
 Հայերը կամ Արմէնները, գացեր բնակեր են
 Դայլ գետի վտրի մասերը, ուր հիմնած են առա-
 ջին հայկական պետութիւնը։ Այդ երկիրը յե-
 տոյ կոչուեցաւ Փոքր Հայք։ Բայց մեր նախնի-

քը հոս ալ երկար չմնացին, անցան Եփրատի հովիտը, ապա տարածուեցան երասխի աւազանին մէջ։ Այս երկիրն ալ կոչուեցաւ Մեծ Հայք։ Ասիկա պատահեցաւ Քրիստոսէ մօս Յ դար առաջ։

Բսել է թէ Հայերը Հայոստանի մէջ բնիկ ժողովուրդ չեն եղեր, այլ եկուոր։

Այս ատեններ Արամէի հիմնած թագաւորութիւնը շատ տկարացած էր և նախը—Ռւրաբառուն պղտիկցած։ Այսու հանդերձ, անոնք կռիւներ ունեցան Հայերու հետ, յաղթուեցան, շատերը փախան գէպի հիւսիս, իսկ ով որ մնաց խառն նըւեցաւ նորեկ ժողովուրդին հետ։ Հայեր ուրիշ ժողովուրդներու մնացորդներն ալ ձուլեցին իրենց մէջ և այս կերպով կազմուեցաւ հայ ժողովուրդը, որ նրդ դարու Բ. կէսին արդէն իր պետութիւնը ունէր։

Մենք զմեզ կ'անուանենք Հայ, իսկ օտարները մեզ կը կոչեն Արմեն։



Պ Ա Ս Պ.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

→»»»««←←

Հայաստան զեղեցիկ երկիր մըն է, ունի շատ
մը բարձր լեռներ, բազմաթիւ գետեր և սիրուն
լիճեր:

Լեռներէն ամենէն բարձրն է Մասիս կամ
Արարատը: Անկէ քիչ մը հեռու է Արագածը,
որ ծածկուած է կանաչութիւններով: Դէպի ա-
րեւմուտք կը գտնուին Բիւրակնեան լեռները, ո-
րոնք նշանաւոր են իրենց առաստ ջուրերովը: Սի-
փան լեռը նոյնպէս բարձր լեռ մըն է Վանայ
լիճին հիւսիսը: Տակաւին ուրիշ բազմաթիւ
լեռներ ալ կան: Այս լեռներէն շատերը ծած-
կուած են անտառներով որոնց մէջ լեցուն վայ-
րի կենդանիներ կան:

Հայաստանի մէջ կան նաեւ շատ մը բերրի
գաշտեր, օրինակ՝ Արարատեան դաշտը, Մուշի
և Բասինի դաշտերը, Խայլն:


Իսկ լիճերէն նշանաւորներն են Վանի լիճը
կամ ծովը, Սևանայ կամ Գեղամայ լիճը և Ռւ-
միոյ կամ Կապուտան լիճը:

Հայաստանի կարեւոր դետերն են. Արաքս,
Եփրատ, Տիգրիս, Ալիս և Իրիս:

Հայեր շատ սիրեցին իրենց այս նոր հայրե-
նիքը և ա՛լ անկէ չուզեցին հեռանալ:

Անոնք բաժնուեցան զաշտերու մէջ, շինեցին
բազմաթիւ զիւղեր, զբազեցան երկրադործու-
թեամբ և անասուններ պահելով: Լեռներու
վրայ բնակողները քաջ որսորդներ եղան: Մէկ
մասն ալ քաղաքներու մէջ բնակեցան, արհեստ-
ներով և վաճառականութեամբ զբազեցաւ:

Հայեր վաճառականութիւն կ'ընէին իրենց
զբացի ժողովուրդներու և հեռաւոր երկիրներու.
Հետո: Ցամաքի վրայ կը ճամբորդէին կարաւան-
ներով, իսկ Եփրատ և Տիգրիս դետերու վրայով



Կը ճամբորդէին ճիւղերէ շինուած լաստերով ու-

բոնք դուրսէն մարթով կը շրջապատէին։

Հայոց մէջ ընտանեկան կապը զօրաւոր էր
և ընտանեկան պատիւը՝ բարձր։

Հին Հայերը կը յարդէին իրենց մեծերը և
մեռած նախնիքը։

Հին Հայաստանի ղլխաւոր քաղաքներն էին.
Արմատիր, Դուին, Արտաշատ, Տիղրանակերտ,
Վաղարշապատ, Անի, Վան և այլն։



Դ Ա Ս Ե .

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՈՆՔԸ



Եստ հին ժամանակներ բոլոր ժողովուրդները ալ ճշմարիտ Աստուածը չէին ճանչնար։ Միայն Հրեաները կը ճանչնային ու կը պաշտէին ճշմարիտ Աստուածը։

Հին Հայերն ալ չէին դիտեր ճշմարիտ Աստուածը։ Անոնք կը պաշտէին արեւը, լուսինը, աստղերը, կրակը, ջուրը ևն։

Կը պաշտէին արեւը, որովհետեւ անիկա
լոյս ու ջերմութիւն կուտար և բոյսերը կ'աճեց-
նէր։ Կը պաշտէին լուսինը, որովհետեւ անիկա
զիշերները լոյս կուտար։ Աստղերը երկինքը կը
զարդարէին։ Կրակը և ջուրն ալ շատ օդտակար
էին։ Կրակը քոյլն է աղբիւր եղբօրը, կ'ըսէին։

Ասոնցմէ զատ հին Հայերը կ'ըսէին թէ կայ
աստուած մը Արամազդ անունով, որ ամենէն
մեծն է։ Կ'ըսէին նաեւ թէ կայ Անահիտ անո-
նով աստուածուհի մը, որ Արամազդի աղջիկն է,
և ամէն լաւ բաներ ան կ'ընէ աշխարհի վրայ։
Աստուածուհի մըն ալ կայ, կ'ըսէին, Աստղիկ
անունով, որ յեռներու վրայ կը բնակի և ան է
որ զեղեցկութիւն կուտայ։

Հայերը այնքան շատ կը սիրէին Անահիտն
ու Աստղիկը որ մինչեւ հիմա ալ անոնց անունը
կը գնենք մեր աղջիկներուն վրայ։

Հայերը շատ կը յարդէին նաեւ իրենց քաջ
նախահայրերն ու դիւցազները և անոնց մեռնե-
լէն յետոյ, զանոնք կը պաշտէին։



Պ Ա Ս Տ Զ.

Հայաստան

ՄԱՐԱՑ, ՊԱՐՍԻՑ և ՍԵԼԵԿԿԵԱՆ իշխանութեան տակ



Այս նոր հայրենիքին մէջ Հայեր երկար ժամանակ ապրեցան իրենց թաղաւորներու և իշխաններու ձեռքին տակ։ Բայց այդ հին թաղաւորներու և իշխաններու կեանքին և դործերուն մասին որպէս բան մը չենք դիաեր գեռ։

Յետոյ Հայաստան ինկաւ Մարերու իշխանութեան տակ։ Մարաստանը Հայաստանի արեւելեան կողմը կը զանուէր և զօրաւոր թաղաւորութիւն մըն էր։

Վերջը Պարսիկները ափեցին թէ՛ Մարաստանի և թէ Հայաստանի։ Պարսիկները աւելի մեծ և զօրաւոր ազգ մըն էին։ Անոնց երկիրը Մարաստանի հարաւը կը զանուէր։ Հայերը շատ բաներ սորվեցան պարսիկներէն։

Պարսիկներէն վերջն ալ Հայաստան ինկաւ Սելեւկեաններու իշխանութեան տակ։

Երբ Աղեքսանդր Մակեդոնացին ափեց ամ-

բողջ հին աշխարհին, Հայաստանն ալ ինկաւ ա-
նոր իշխանութեան տակ: Սակայն Աղեքուանդը ը-
շուտ մեռաւ և իր ընդարձակ երկիրները բուժնը-
ւեցան իր հինգ զօրապետներուն միջեւ որոնք ա-
ռանձին առանձին պետութիւններ հաստատեցին:
Հայաստան ինկաւ Սելեւկեաններու իշխանու-
թեան բաժինին մէջ:

Թէ՞ Պարսիկները և թէ Սելեւկեան թագա-
ւորները կառավարիչներ (սատրապ) կը զրկէին
մեր երկիրը զայն կառավարելու համար, Ասոնք
երբեմն ալ հայ կ'րլլային:

Քրիստոսէ 190 տարի առաջ, Հայաստանի
մէկ մասին վրայ Սելեւկեաններու կողմէ կա-
ռավարիչ էր Արտաշէս քաջ իշխանը, որ նաև հայրենասէր ու ազատասէր էր:

Ան կ'ուղէր Հայաստանը օտարներէն ազա-
տել և թագաւոր ըլլալ:

Ուստի երբ տեսաւ որ Հռոմայեցիները Սե-
լեւկեաններու վրայ պատերազմի եկած են, ա-
պլատամբեցաւ և եղաւ Հայաստանի թագաւորը:

Արտաշէս Հայոց առաջին թագաւորն է: Այ-
սիմեց Արտաշէսեան Հարստութիւնը, որ ունե-
ցաւ. 11 թագաւորներ:

Այս բոլոր թագաւորներն ալ աշխատեցան
միացնել Հայաստանը, որ շատ մը մասերու բաժ-
նուած էր:

Մասն գ.

ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

ԴԱՍ Է.

ԱՐՑԱՇ Է Ա.




Արտաշեսան Հարստութեան առաջին թագաւորը՝ Արտաշէս Ա. քաջ, խելացի և պատերազմասէր մարդ էր։ Թագաւոր ըլլալէն անմիշապէս յետոյ աշխատեցաւ իր իշխանութեան տակ առնել Հայաստանի այն մասերը որոնք ուրիշ իշխաններէ զբաւուած էին։ Ուր որ գնաց Հայոց քաջ թաղաւորը Հայերը սիրով միացան անոր։

Յետոյ Արտաշէս թագաւորը աշխատեցաւ կարդ ու կանսն դնել իր նոր թագաւորութեան մէջ։ Ան շատ կը սիրէր իր ժողովուրդը և կ'ուզէր որ ան երջանիկ ըլլայ և լաւ ասլրի։ Իր օրով երկրագործութիւնը այնքան յառաջ գնաց մէջ, որ հիները կ'ըսէին թէ Արտաշէսի

օրով կտոր մը հող չկար պարապ և ոչ ալ մարդ
մը՝ անգործ։

Արտաշէսի ժամանակ կ'ապրէր շատ նշանա-



ւոր մարդ մը՝ Աննիրալ Անունով։ Աննիրալ
կարկեղոնի իշխանն էր. մեծ պատերազմինը ը-
րած էր Հռոմայեցւոց հետ և շատ անդամ յաղ-
թած անոնց։ Բայց վերջէն յաղթուեցաւ և փա-
խաւ Հայաստան՝ Արտաշէսի մօտ։ Արտաշէս սի-
րով ընդունեց զայն և բնակութիւն տուաւ։ Կ'ը-

ուն թէ, որ մը երբ Արտաշէս և Աննիրալ միասին
կը պատէին Երասխ գետին եղերքը, Աննիրալ շատ
յարմար տեղ մը տեսաւ. և խորհուրդ տուաւ Ար-
տաշէսին որ հոն քաղաք մը շինէ: Արտաշէս
Աննիրալի տուած յատակադին համաձայն շինեց
այդ քաղաքը որ իր անոնվ կոչուեցաւ Արտա-
շատ. Արտաշատ Երկար ատեն հայոց մայրաքա-
ղաքը եղաւ. Ան հիմա աւերակ է:


Հայերը այնքան սիրեցին իրենց այս թաղա-
ւորը որ անսր վրայ հէքիաթներ ալ շինեցին.
Այս հէքիաթներէն մէկն է Արտաշէսի և Ալան-
ներու պատերազմը. Արտաշէս յաղթեց Ալաննե-
րուն, բայց յետոյ անոնց թաղաւորին աղջիկը՝
Սամենիկը՝ կին առնելով, հաշտուեցաւ անոնց
հետ:

Արտաշէս թաղաւորեց Քրիստոսէ առաջ
190-161 թուականը:



ԴԱՍ Բ.

ՏԻԳՐԱՆ Գ. ՄԵԾՎԼ



Արտաշէսեան հարստութեան ամենամեծ թաղաւորն է Տիգրան Գ. լ. Անիկա ամբողջ հայթազաւորներուն մէջ ալ ամենէն մեծն է և աշխարհի նշանաւոր մարզերէն մէկը:



Արտաշէս Ա. հիմնեց Հայոց թաղաւորութիւնը, բայց Մեծն Տիգրան օտարներէն դրաւեց և

միացուց ամբողջ Հայուստանը։ Յետոյ գրաւեց
շրջակայ գրեթէ ըոլոր երկիրները կամ զանոնք
իրեն զաշնակից ըրտւ, և ինք եղաւ Արքայից
Արքայ, այսինքն կայոր։

Դէմքով գեղեցիկ, խելքով մեծ, մարմնով
յաղթանգամ և սիրառվ ամուր մարդ մըն էր
Մեծն Տիգրանը, որ ամէն բան ըրտւ իր նպատա-
կին հասնելու, այսինքն ամենէն մեծ արքան ըլ-
լարու համար։

Բայց Տիգրան ունէր նաև մեծ պակասու-
թիւններ. նախ շատ հպարտ էր և կարեւորու-
թիւն չէր տար ուրիշներու խորհուրդին։ Յետոյ՝
չէր յարդեր ուրիշներու իրաւունքը, կը սիրէր
շողոքորթները և շիտակ խօսողներէն շատ չէր ա-
խորժեր, Կ'ըսեն թէ չորս թագաւորներ բռնած
էր զերի և երբ ինք իր զահին վրայ նստէր, ա-
նոնք ձեռքերնին կուրծքերնուն ի՛ռ քովը պիտի
կենային ծառաներու պէս։ Կամ երբ ինք աեղ
մը երթար, անոնք իր ձիտն կամ կառքին ետե-
ւէն պիտի վազէին։

Իրեն այս հպարտ և զոռող բնաւորութեան
պատճառաւ, հպատակ աղզերը դինք շատ չէին
սիրեր։ Անոնք կը հնազանդէին Տիգրանին որով-

հետեւ կը վախնային անկէ, բայց որտանց ամէնքն
ու թշնամի էին անոր, մանաւանդ յոյները:

Եղաւ առեն մը երբ Տիգրանի կայսրութեան
մէջ էին Կապադովկիան, Կիլիկիան, Ասորիքը,
Փիւնիկէն, Միջազետքը, Մարաստանը և այլն:
Եւ իր բանակը կազմուած էր Վրացիներէ, Աղ-
ուաններէ, Մորերէ, Արարներէ, Քիւրաերէ ևն:
Կ'ըսեն թէ Տիգրանի զօրքերուն թիւը կէս միլի-
ոնի կրնար հասնիլ. Բայց այսպէս բազմաթիւ
ազգերէ կազմուած բանակ մը չէր կրնար զօրտ-
որ ըլլաւ:



ԴԱՍ թ.

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

→•••••←••

ՄԵծն Տիգրան թաղաւորեց մօտ 40 տարի։
Բայց ան 30 տարի պատերազմներով անցուց։

Տիգրանի թաղաւորութիւնը երկու մասի
կընանք բաժնել։ — յաջողութիւններու ցզան
և ձախորդութիւններու ցզան։

Առաջին շրջանին ան բնաւ չպարտուեցաւ
պատերազմներու մէջ և Կասպից ծովէն մինչեւ
Միջերկրական ու Կովկաս լեռներէն մինչեւ Ա-
րարիս իրեն հպատակեցան։

Երկրորդ շրջանին մէջ իր դրաւած բոլոր այս
երկիրները ստիպուեցաւ ետ տալու հրաժարիլ
Արքայից Արքայութենէն և իրեն պահել միայն
Հայաստանն ու անոր թաղաւորութիւնը։

Տիգրան միայն Հռոմայեցիներէն պարտուե-
ցաւ, մնացեալ բոլոր ազգերու դէմ միշտ յաղ-
թական ելաւ։

Պատերազմներուն պատճառը։ — Իրեն Հռո-

մայեցւոց դէմ պատերազմի պատճառը Պոնտոսի թագաւոր անհանդարտ Միհրդաստն էր։

Միհրդատ դաշնակից եղած էր Տիգրանին Հոռմայեցւոց դէմ միասին պատերազմելու համար և պայմանագրած էին որ երբ յաղթեն երկրը Միհրդատին, իսկ հարստութիւնը Տիգրանին ըլլայ։ Միհրդատ իր կղուղատրա աղջիկն ալ կնութեան տուած էր Տիգրանին։ Միհրդատ թշնամի էր Հռոմի, որովհետեւ չէր ողեր որ անոնք Աստոյ մէջ աղգեցաթիւն ունենան։

Տիգրան և Միհրդատ նախ գրաւեցին ետպազովկիան որուն թագաւորը Հռոմայեցւոց կողմէն էր։ Բայց Հռոմայեցիք զրկեցին Սիլլա զօրավարը, որ կապադովկիան տուաւ Միհրդատէն։ Տիգրանի երկու զօրավարները ետ առին երկիրը և տուին Միհրդատին։ Բայց ան նորէն չկրցաւ պահել։


Եւսոյ Տիգրան պատերազմեցաւ Պարթեւաց Արտաւան Բ. թագաւորին դէմ։ Ան հին վրէժ ունէր Պարթեւներէն, որովհետեւ, իր պղտիկութեան տաենը զինք պատահնդ տարեր էին և Հայաստանէն շատ մը տեղեր գրաւելէ յետոյ աղասա արձակեր էին։ Տիգրան ետ տուաւ այդ տեղերը և Պարթեւաց ձեռքէն ալ ուրիշ երկիրներ։ Պար-

թեւաց Արքայից Արքայէն ալ խլեց առաջնութեան իրաւունքը և արտ անունով դրամ՝ կտրել տուաւ:

Հայտաստանի հարաւային կողմը կայ Ասորիք բասւած երկիրը։ Այս երկրի Սելեկեան թագաւորները շատ նեղութիւն կուտային իրենց ժողովարդին։ Աւստի ժողովուրդը դիմեց Տիղրանին որ դայ դրաւէ իրենց երկիրը։ Տիղրան դրաւեց Ասորիքը։

Քիչ յետոյ Տիղրան զրաւեց նաև Կիլիկիան։ Յետոյ նորէն գնաց զրաւեց Կապադովիկիան և բնակիչներէն 300,000 հոգի բերաւ բնակեցուց իր մայրաքաղաք Տիղրանակերտի մէջ։

Տիղրան զրաւեց նաև Փիւնիկէն ու պատժեց անոր Սելինէ թագուհին Կիլիկիան ապօտամբեցուցած ըլլալուն համար, իսկ Երուսաղէմի թագուհին բարեկամութիւն խոստացաւ Հայոց թագաւորին։ Հիմա Տիղրան եղած էր Արքայից Արքայ։



Դ Ա Ս Փ .

ՏԻԳՐԱՆԻ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ
ՔԱՅՔԱՅՈՒՄԸ



Տիգրանի կայտութիւնը տեսեց միայն 18
տարի, որովհետեւ Միհրդատի պատճառաւ ան
նոր պատերազմներու մասաւ Հռոմայեցւոց հետ և
վերջի վերջոյ յաղթաւութաւու։

Լուկովլոս. — Հռոմայեցիք Միհրդատի դէմ
զրկեցին նոր զօրսապետ մը Լուկուլլոս անունավ.
անիկա երկու անգամ յաղթեց Միհրդատին։
Քիչ մեաց որ Միհրդատն ալ զերի իշխար, բայց
փախած ատենը ճամրուն վրայ ոսկի և արծով
փռեց որ Հռոմայեցի դինուորները անոնցմավ ըղ-
բաղին և ինք փախաւ եկաւ Տիգրանի մօտ, Ա-
կայն Հայոց թագաւորը բարկացած էր անոր և
զայն հեռաւոր տեղ մը զրկեց որ անոր պատճառաւ
Հռոմայեցւոց հետ չթշնամնայ, Բայց անօդուաւ
Լուկուլլոս մարդ զրկեց Տիգրանին և պահանջեց
Միհրդատը։ Տիգրան պատասխանեց որ չի կըր-
նար յանձնել և պատրաստ է պատերազմի։


Յետոյ Տիղրան և Միհրդատ իրարու հետ հաշտուեցան ու նորէն պատրաստուեցան պատերազմի։

Ասոր վրայ Լուկուլսս մոտու Հայաստան և պաշտպեց Տիղրանակերտը, որ Տիղրանի երկրորդ մայրաքաղաքն էր։

Տիղրան երբ տեսաւ թշնամի բանակը որ իրենին չափ մեծ չէր ըստու. «Ո՞վ են ասոնք, եթէ կռաւելու եկած են՝ քիչ են, եթէ իրր զեսպան եկած են՝ շատ են»։ Եւ անհոգ կեցաւ։

Հռոմայեցւոց դօրքը քիչ էր, բայց կրթուած Լուկուլսս յարձակմամբ առաւ քաղաքը. ներսի յոյները օղնեցին անոր։ Տիղրան հազիւ կրցաւ փախչիլ և քաշուեցաւ դէպի իր Արտաշատ մայրաքաղաքը։ Լուկուլսս ինկաւ անոր ետեւէն։ Սակայն ձմեռ էր և Լուկուլսի դօրքերը յոդնած։ Անոնք ապստամբեցան. չէին ուղեր շարունակել պատերազմը։ Լուկուլսս ամօթապարտ գնաց Միջազեաք և զրաւեց Մծբին քաղաքը։

Պոմպէոս եւ Արտաւատի դաշինքը. — Հռոմի կառավարութիւնը բարկանալով Լուկուլսովին, դայն պաշտօնէ հանեց և անոր տեղ զրկեց Պամպէոս նշանաւոր զօրավարը։



ՊՈՄՊԵՈՍ

Բայց Ցիզրանի կացութիւնն ալ գէշցած էր։
Նուև՝ ան ծեր էր. 80 տարեկան։ Յեսայ՝ իր որ-
դին՝ կրտսերն Ցիզրան, իրմէ ապստամբած էր և
կ'ուղեր ինք ըլլալ թագաւոր։ Պարթեւաց թա-
գաւորը իրեն թշնամի էր եւ գաշնակիցներն ու
հպատակ ազգերը զինքը չէին սիրեր։ Իր միակ
բարեկամը՝ Միհրդատն ալ, Պոմպէոսէն յաղթուած
և անձնասպան եղած էր։

Տիղրան մինակ մնացած էր:

Ուստի, Տիղրան չուզեց շարունակել պատերազմը: Երբ Պամպէսս իր դաւկին առաջնորդութեամբ Հայաստան մտաւ, Տիղրան գնաց անոր հետ տեսնուեցաւ: Պամպէսս մեծ պատիւներով ընդունեց Տիղրանը և հաշտուեցաւ անոր հետ: Արտաշատի մէջ դաշինք մը դրուեցաւ հետեւեալ պայմաններով: —

1. Տիղրան իրենց տէրերուն վերադարձուց գրտած բոլոր երկիրները և հրաժարեցաւ Արքայից Արքայ ըլլալէ: Ան միայն Հայաստանի թագաւոր մնաց:

2. Տիղրանէ յետու եկող թաղաւորները Հռոմայեցւոց հաւանութեամբ դահ պիտի բարձրանային:

3. Հայ թաղաւորները Հռոմայեցւոց բարեկամ պիտի ըլլային և միասին պիտի պատերազմէին թշնամիներուն դէմ:

4. Հայաստանի Ծափք դաւառի վրայ կրտսերն Տիղրան պիտի թաղաւորէր մինչեւ իր հօր մահը:

Բայց կրտսերն Տիղրան դոհ չմնաց ասկէ և Պամպէսս դայն Հռոմ տարաւ ու սպաննեց:

Մեծն Տիղրան մեռաւ 85 տարեկան հասակին

մէջ։ Երբ մեռաւ ա՛լ կայսր չէր, բայց իր յտորդներուն ձզեց միացած, մեծ ու զօրաւոր Հայաստան մը։

Մեծն Ցիղրան մեր պատմութեան ամենէն փառաւոր գէմքն է. ան մեր անունը ճանչցոց աշխարհին։

Ցիգրանի ձգտումը. — Ցիղրանի ժամանակ Հայաստան դեռ շատ ետ մնացած երկիր մըն էր, բաղդատիմամբ դրացիներուն։ Ուստի ան յոյն, հրեայ և ասորի բաղմաթիւ դադթականներ բերաւ իր երկրին մէջ որպէսզի անոնց միջոցաւ Հայաստանը յառաջդիմէ։ Այդ զաղթականներուն ան տուաւ հող և շատ մը իրաւունքներ։ Ցիղրանակերտ մայրաքաղաքը զոր շինեց ինք՝ Մեծն Ցիղրան, 25 տարուան մէջ մօտ 300,000 բնակիչ ունեցաւ, մեծ մասը օտար։

Ցիղրան կը սիրէր հելլէն դպրութիւնը և յոյն նշանաւոր ուսուցիչներ բերել տուած էր իր զաւակաց կրթութեան համար։



7-600 4-6.

ԱՐՏԱՀԱՅՐ Բ.

Հայոց սիրելի թագաւորներէն մէկն է Նաեւ
Արտաւազդ Բ., որդին և յաջորդը Մեծն Տիղրա-
նին։ Իր երեք եղբայրները մէյ մէկ դաւաճան-
ներ եղած էին և իրենց հօրը ձեռքով պատժը-
ւած։ Բայց Արտաւազդ Բ. լսու կրթութիւն մը
առացած էր։ Գիտէր յունարէն լեզուն և անով
թատերգութիւններ կը դրէր։



Արտաւազի Բ.ի Դրամը

Կրասոս. — Իր թագաւորութենէն քիչ յետոյ
նոր կոփւ մը բացուեցաւ Հռոմայեցւոց և Պարթեւաց
միջեւ, որոնք աշխարհի ամենամեծ ազգերն էին
այն ատենա Հռոմայեցւոց բանակին պետն էր
Կրասոս անուն մէկը, որ կ'ուզէր յաղթաթիւններ
տանիլ և հարատանալ կազմառութ:

Կրասոս երբ Հայաստանի մօտերը հաւառ Արտաւալդ իրեն խորհուրդ տուառ որ Պարթեւներու դէմ պատերազմի երթարու համար անցնի Հայաստանի մէջէն։ Եթէ այդպէս ընէր Հումայեցւոց զօրապետը՝ Արտաւադ գն ալ, իրեւ դաշնակից, իրեն ովիտի կընար օգնել։

Սակայն Կրասոս խարսնեցաւ արարներէն և անոնց երկրէն դնաց ու շատ նեղոթթիւն քաշեց։ Հին Խառան քաղաքին քով Պարթեւները իրեն դիմացը երան Սուրէն իշխանի տոտչնորդ ոթեամբ։ Սարսափելի կռիւ մը եղաւ և Կրասոս յաղ թուեցաւ։ Սուրէն խարէտթեամբ բռնեց Կրասոսը և զլխառեց, խոկ իր բանակը ջարդուեցաւ, փճացաւ։

Այս կռիւին ժամանակ Պարթեւաց Արտաւալդ բանակը բանակ մըն ալ զրկած էր Հայաստան որ Արտաւալդ Կրասոսի օդնոթեան չերթայ։

Արտաւալդ երկրորդ անդամ լուր զրկեց Կրասոսին որ իր խորհուրդը մտիկ ընէ, յայտնեւ լով թէ ինք չի կընար իրեն օգնել, բայց հպարտ Կրասոսը պատասխանեց թէ՝ Պարթեւներուն յաղթելէն յետոյ պիտի զար զինքը պատժելու։ Ասոր վրայ Արտաւալդ բարեկամացաւ պարթեւներուն հետ և իր քոյրը տուառ Արտի որդին՝ Բա-

կուրին, ու մեծ խնճոյիքներ կատարեցին այս առ-
թիւ: Երկու թագաւորները ներկայ էին հարա-
նիքին:

Սորէն իշխանը Հայաստան դրկեց Կրասոսի
զայխը: Զայն բերտղները հայոց մայրաքաղաքը
հասան ճիշդ: Հարսնիքին օրը, երբ հարսանեկան
հանդէսներէ յետոյ ներկայացում կար: Կրասոսի
դլուխը բեմի վրայէն ցուցադրուեցաւ ներկանե-
րուն որոնք ուրախութեան ազաղակներ արձակե-
ցին: Հոռմի մէջ երբ այս բանը խմացան շատ
զայրացան հայերուն:



Դ Ա Ս Ժ Բ.

ԱՐՏԱԽԱՉԴԻ և ԱՆՏՈՆԻՈՍ

Յաջորսկ տարի
Կրասոսի աեղ եկաւ
Անտոնիոս զօրավա-
րը : Ասիկա հայ
բանակն ալ միասին
առնելով յարձակե-
ցաւ Պարթիաց վը-
րայ, բայց ինքն ալ
յադթուեցաւ : Ար-
տառազդ իրմէ տ-
ռաջ ձգեց պատե-
րազմը և Հայաստան
վերադարձաւ : Հը-
ռոմէական զօրքին



ԱՆՏՈՆԻՈՍ

մնացորդը հաղիւ փախաւ Հայաստան անօթի ու
ծարտու : Այդ զօրքերը հոն առատ ուտելիք դը-
տան և այնքան կերտն որ շատերը հիւանդացան
ու մեռան :

Անտոնիոս զարձաւ Աղեքսանդրիս Կղուսաւա-
րա թագուհիին քով ու լոր հանեց թէ Արտա-

ւաղդի պատճառաւ յաղթուեցաւ . Յեսոյ փորձեց խարէոթեամբ բռնել Արտաւազդը , բայց չյաջաղեցաւ : Անտոնիոս նորէն մասու Հայոտանն և այս անդամ՝ յաջաղեցաւ . խարէոթեամբ բռնել Հայոց արքան : Զայն սոկի և արծաթ շղթանեւ բավ կապելով իր ընաանիքին հետ բերաւ . Ազեքանդրիա , Հայոտաննը կողովաելէ յետոյ :

Հայերը Արտաւազդի տեղ թաղուոր գրին իր որդին Արտաշէսը և կոտորեցին ու փախցոցին իրենց երկիր մնացած հռոմայեցւոց զօրքը :

Անտոնիոս , Ազեքազդրիոյ մէջ , օր մը մեծ հանդէս մը բրաւ : Կղոէպատրա թաղուհին սոկեղէն ամսուի մը վրայ նոտեցաց և սախակեց Հայոց Ա.Ա.քայից Ա.Ա.քան օր երթայ անոր երկըբապագութիւն ընէ և ըսէ «Թագուհիներու թաղուհի» : Արտաւազդ չըրաւ ասիկա և ասոր համար սպաննուեցաւ . վասարար :

Անտոնիոս մեծ հակառակութ մը ունէր անունը Ակտաւիանոս - Օգոստոս : Ասիկա պատերազմ բացաւ . Անտոնիոսի դէմ : Անտոնիոս սպաննուեցաւ . իսկ Կղոէպատրա զերի չիյնալու համար անձնասպան եղաւ :

Անտոնիոս և Կղոէպատրա կ'ուղէին Ազեքանդրիան ընել Հռոմայեցւոց մայրաքաղաքը : Ասոր համար էր օր անոնք պատժուեցան Ոկտաւիանուէն : Արտաւազդ թագաւորեց Ք.Ա.56-34ին :

Դ Ա Ս Ժ Պ.

ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ
ԿՈՐԾԱՆՈՒՄԸ
Իւ ՕՏԱՐ ԹԱԳԱԽՈՐՆԵՐ

Օդոստոս Արտաւաղդ Բ.ի զաւակները իրեն
հետ Հռոմ տարաւ և հռոմէական կրթութիւն
տուաւ անոնց։ Իր նպատակն էր զանոնք թաղա-
ւորցնելով Հայոց վրայ Հայաստանը իրեն հետ
ունենալ։

Ասկէ զատ, Օդոստոս լաւ վերաբերում՝ ու-
նեցաւ նաեւ հայ նախարարներու հանդէպ, որոնց-
մէ շատերը հռոմէասէր դարձան։ Ուրիշ նախա-
րարներ սակայն չարունակեցին պարթեասէր
մնալ և այս կերպով Հայոց մէջ առաջ եկան եր-
կու կուսակցութիւններ։ Պարթեւասէրները շատ
էին, իսկ հռոմէասէրները՝ քիչ։

Հայ ժողովուրդը, այսպէս երկուքի բաժնը-
մելով աւելի ակարացաւ։ Հռոմայեցւոց ուղածն
ալ աս էր արդէն, որովհետեւ իրենց դործին չէր
զար որ հայ ժողովուրդը միացած և զօրաւոր ըլ-
լայ։ Իրենց ուղղութիւնն էր. «Բաժնէ որ տիւ-

րեսա: Անոնք բալոր աղղերու մէջ այսպէս բաժանում կը ձգէին որ դիւրովթեամբ կարենան ախտադեռե անոնց երկրին:

Արտաշէսեան հարստովթեան վերջին թաղաւորը եղաւ Տիգրան Զ., Արտաւազդ Բ ի վերջին զաւակը: Ան կարճ ատեն մը թաղաւորեց որովհեաւ Օլոսսոս զայն Հռոմ կանչեց և ա՛լ չի ձգեց որ վերադառնայ և ոչ ալ ուրիշ հայ թաղաւոր մը զրկեց:

Այսպէս վերջացաւ Արտաշէսեան Հարստովթիւնը որ աեւեց մօտ 200 տարի: Քրիստոսէ առաջ 190 էն մինչեւ Քրիստոսէ վերջ 14 թուականը:

Անկէ յետոյ Հայաստան ատեն մըն ալ կըստախնձոր եղաւ Հռոմայեցւոց. Պարթեւաց և Վըսրացիներու միջեւ որոնք աշխատեցան իրենցմէ թագաւորներ դնել մեր երկրին վրայ: Բայց այս օտար թագաւորները չկրցան երկար մնալ և դործ մը տեսնել ու կռիւներով աւելի տկարացուցին մեր երկիրը:

Հայաստան այնպիսի երկիր մըն է որուն տիւրապետողը՝ կրնայ տէր ըլլալ շրջակայ երկիրներուն ալ: Ասոր համար էր որ Հռոմայեցիք ու Պարթեւները կ'աշխատէին իրարու ձեռքէն խլել:

զայն, օդնութեամբ հայ նախարարներուն, որոնք
կտմ պարթեւասէր էին, կամ հռոմէասէր, եր-
բեմն մէկ երբեմն միւս կողմը կ'անցնէին և
մեծամեծ վնասներու. կ'ենթարկէին հայ ժողո-
վուրդը:

Հռոմայեցիք իրենց զրաւած երկիրներու բլ-
նակչութեան հետ միեւնայն կերպով չէին վար-
ուեր. Ումանք կը զրկէին իրենց անկախութենէն,
ուրիշները կը պաշտպանէին և իրենց զաշնակից
կը դարձնէին. ումանք ալ իրենց անուանական
գերիշխանութեան ասակ կը պահպանէին: Բայց ի-
րենց բուն նպատակն էր ասիացիները տկարա-
ցընել և անոնց երկիրներուն տիրապետել: Այս
պատճառաւ ալ Ասիոյ ժողովուրդները չէին ու-
րեր Հռոմայեցիք որոնց զրկած կառավարիչներն
ու զօրապետները կաշառակեր և անարդար մար-
դիկ էին:

Հռոմայեցիք, Օկոստոսէն յետոյ քանի մը
անզամ փորձեցին վերջացնել Հայոց անկախու-
թիւնը և երկիրը հռոմէական նահանգ մը դար-
ձընել, բայց Պարկաստան միշտ հակառակեցաւ.
այդ պատճառաւ ալ Հայոց Արշակունեաց թա-
գաւորութիւնը կրցաւ իր զոյտթիւնը պահպանել
մօտ 300 տարի:

Մասն Դ.



ԴԱՍ ԺԳ.

ԱՐԾԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ



ՏՐԴԱՏ Ա.



Քրիստոսէ յետոյ 51 թուտիանին Պարթեւաց
թագաւորն էր քաջ և խելացի վաղարշ Արշակու-
նին։ Անիկա Մարտասանի վրայ թագաւոր նշա-
նակեց իր մեծ եղբայրը Բակուրը, իսկ Հայաստա-
նի վրայ իր փոքր եղբայր՝ Տրդատ ինք կը
մնար Արքայից Արքայ և ինք միտյն կընար
դրամ կարել։ Ասոր համար է որ մեր Արշակու-
նի թագաւորներէն մեղի բնաւ դրամ հառած չէ։

Բայց այդ ատեն Հայաստանի վրայ կը թա-
դաւորէր Հռադամիզդ, որ Վրաց թագաւորին որ-
դին էր և Հռամայեցաց բարեկամ։ Ասիկա շատ
անգութ մարդ մը ըլլալուն պատճառաւ, Հայերը
միացած Տրդատին զայն փախցուցին։

Կորբուղոն եւ Արտաւատի աւերումը . —
 Հռոմայեցիք երբ այս լուրը առին Հայաստան
 զրկեցին նշանաւոր կորրուզոն զօրավարը : Ասիկա
 մեծ գժուարութեամբ կրցու հասնիլ մինչև Ար-
 տաշաբ մայրաքա-
 ղարը : Տրդաս ըս-
 տիպուեցաւ ետ քաշ-
 ուիլ իր զօրիքը քիչ
 ըլլարուն պատճա-
 ռաւ : Արաւաշատի
 բնակիչները քազա-
 քը յանձնեցին կոր-
 բուզոնին պայմանաւ-
 որ վնաս մը չի տայ-
 րայց սա ձմեռը
 հոն մնալէ յետոյ,
 զարնան քաղաքը
 կործանեց ու այն-
 պէս քաշուեցու :
 Տիգրանակերար ևս
 դրաւելէ յետոյ կոր-
 բուզոն Հայաստանի
 վրայ թագաւոր դը-
 րաւ Տիգրան անու -



ՏՐԴԱՏ Ա.

նով մէկը որ հրեայ էր։
 Սակայն շուտով Տրդ-
 դաս նոր զօրքով Հա-
 յաստան մտաւ։ Միւս կող-
 մէ Վաղարշն ալ պատե-
 րակմ բացաւ Հռոմայեց-
 ոց գէմ։ Այս անդամ
 Պարթեւաց գէմ եկաւ
 Պետոս զօրավարը որ չա-
 րածար յաղթուեցաւ։
 Տրդատ զրաւեց Հայա-
 տանը։

Համաձայնութիւն
 Պարթեւաց իւ Հռոմա-
 յեցւոց միջեւ. — Հռո-
 մայեցիք ստիպուեցան
 նորէն կորրուզոնը զրկել Հայոց և Պարթեւաց
 գէմն Բայց այս նշանաւոր զօրավարը հակառակ
 որ շատ զօրք ունէր իր ձեռքին տակ, աւելի խե-
 լացութիւն սեպեց զործը համաձայնութեամբ
 վերջացնել։ Առաջարկեց որ Տրդատ Հռոմ եր-
 թայ և Ներսն Կայսրէն ընդունի իր թագը։
 Տրդատ յանձն առաւ, պայմանաւ որ (1) Զրադաշ-
 տական կրօնի համեմատ ցամաքով երթայ, և ոչ



ԿՈՐՐՈՒԴՈՒ

թէ ծավով, որովհետեւ
Պարսից կրօնը կ'արդի-
լէր չորը աղաստել .
(2) ճամբան մեծ պա-
տիներ ըլլան իրեն .
(3) բոլոր ծախսերը Հռո-
մայեցիք ընեն :



ԽԵՐՈՆ ԿԱՅԱՐԸ

Տրդատ Հռոմի մէջ .
Համաձայնութիւն զոյա-
նալէ յետոյ, Տրդատ իր
կնոջ, զաւակներուն,
հայու պարթեւ իշխաններու և 300 զինուորնե-
րու հետ ճամբայ ելու :

Ներսն մեծ պատիւներով ընդունեց հիւրե-
րը, Թագավորութեան հանդէսն այ շատ վառա-
ւոր եղաւ և կայսրը իր ձեռքով Տրդատի դրու-
խը զրաւ հայկական թաղը :

Հանդէսին ներկայ եղագ ամրոխը ուրախու-
թեան աղաղակներ կ'արձակէր : Ի պատիւ Տըր-
դատի Պամպէսսի թատրոնին մէջ ներկայացում՝
արուեցաւ : Ներկաները զարդարուած էին սո-
կիով և ծիրանիով և այդ օրը կոչուեցաւ «Անկի-
Ռ» : Ներսն իր ձեռքով զացեց Յանոսի տա-

ճարին դուռները ի նշան խաղաղութեան ծովի և
ցամաքի վրայ:

Հանդէսները վերջանալ էն յետոյ Ցրդատ
վերադարձաւ նոյն պատիւներով։ Ներսն անոր
առաւաւ շատ մը վարպետներ և դրամ որ վերա-
նորոդէ Արաաշաար։


Այս կերպով թէե Հայաստանը հռոմէական
գերիշխանութեան տակ կը մտնէր. բայց ատիկա
անուանական էր։ Հռոմի և Պարթեւներու մի-
ջև, այս կերպով, խաղաղութիւն հաստատուեցաւ։
Այս խաղաղութիւնը տեւեց մօտ յիսսւն տարի
և Հայաստանի մէջ ծաղկեցան արհեստներն ու
վաճառականութիւնը։

Ցրդատ թագաւորեց 66—75։



ԴԵՍ ԺԵ.

ՏՐԴԱՏԷՆ ՄԻՆՉԵՒ ԽՈՍՔՈՎ Բ.



Նոր պատերազմներ. — Տրդատէն անմիջապէս
յետոյ կ'երեւի Հայոց թագաւոր եղաւ. Ամնատ-
րուկ, որուն յաջորդեց իր որդին Աշխադար:
Սա չկրցաւ սիրելի ըլլալ Հռամայեցւոց, ոչ այ-
դարթեւաց, ուստի Խոսրով Բ. երբ Պարսից թա-
գաւոր եղաւ Աշխադարը վար առաւ և անոր
տեղ թագաւոր դրաւ. Պարթամասիր, առանց Հը-
ռոմի հաւանութեան:

Այս պատճառաւ Տրայիանոս կայսրը պատե-
րազմ բացաւ Հայոց և Պարթեւաց դէմ, և, վա-
տաբար սպաննեց Պարթամասիրը և Հայաստա-
նը ըրաւ հոռմէական նահանգ մը:

Տրայիանոս կայսրը Հայաստանէն անցաւ.
Միջագետք և Ասորիք զորս նոյնպէս հոռմէական
նահանգի վերածեց: Յետոյ մտաւ. Պարթեւաց
երկիրը, գրաւեց մայրաքաղաքը, թալանեց Ար-
շակունեաց սոկեձոյլ զահը և Խոսրով Բ.ի դաւա-
ճան որդին թագաւոր ըրաւ և վերադարձաւ:

Տրայիանոսի այս ընթացքը պատճառ եղաւ սակայն որ բոլոր Պարթեւները միանան և նոր սպառերազմներու ձեռնարկեն։ Հայաստանն ալ մասնակցեցաւ այս ապատամբութեան։

Տրայիանոսի յաջորդ Ադրիանոս կայսր խաղաղութեան մէջ ազգեցաւ Պարթեւաց և Հայոց հետ և Հայաստանի թագավոր եղաւ Վաղարշ։

Բայց Անտոնիոս Պիոս կայսրը Վաղարշը գահէն զրկեց և տեղը դրաւ Սոյեմսա որ միայն մօր կողմէ Արշակունի էր և ջերմ հռոմայիսէր կայսեր այս արարքը և ոսկեղէն գահը վերադարձնելու խնդրանկին մերժուիլը պատճառ եղաւ որ նորէն բարբոքի պատերազմը։ Հռոմէական բանակը ջարդ ու փշուր եղաւ և հրամանաւարն ալ ամօթէն անձնասպան եղաւ։

Հռոմ նոր և մեծ բանակ մը զրկեց որ յաղթական հասաւ մինչև Տիգրոն և արքունի պալատը հողին հաւասար ըրտաւ։ Նոյն ատեն երկրորդ բանակ մը Հայոց վրայ գնաց և Հայաստան նորէն Հռոմին ենթարկուեցաւ և Սոյեմսա կրկին զահ բարձրացաւ։

Սոյեմսէն վերջ Հայոց թագավոր եղաւ Խոսրով Ա. որ կրցաւ սիրելի ըլլալ Պարթեւներուն և Հռոմայեցիներուն։

Կարակալլա կայսր նոր պատերազմի մը
ձեռնարկելով Հայոց և Պարթեւաց դէմ, խարէու-
թեամբ իր քով հրաւիրեց Խոսրովը և կնոջ ու
որդիներուն հետ շղթայի զարկաւ, աիրելու
համար Հայաստանի:

Ասոր վրայ Հայաստանի մէջ մեծ ապստամ-
բութիւն մը ծագեցաւ արքայորդի Տրդատ Բ.ի
առաջնորդութեամբ որ թագուար հռչակուեցաւ
և յաղթեց իր վրայ եկող հռոմէական բանակին:

Թայց երբ Կարակալլա կայսր ինք անձամբ
եկաւ Հայաստան, Տրդատ Պարթեւաց քով դնաց:
Սակայն արքայից արքան ստիպուեցաւ զայն կայ-
սեր յանձնել:

Երբ Կարակալլա իր անդժութեան պատ-
ճառաւ սպաննուեցաւ իր. զինուորներէն, իրեն
յաջորդը Մակրինոս ծանր պարտութիւն մը կրեց
Պարթեւներէն և ստիպուեցաւ ետ դարձնել Տըր-
դատ Բ.ը, որուն արքայական թագ առաւ, վե-
րադարձուց նաև անոր եղբայրներն ու քոյրերը
և Հայաստանէն առնուած աւարը:



Դ Ա Ս Փ Ձ.

ՍՍՍԱՆԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ



Արտահիր Սասանեան. — 226 թուականին
մեծ փափոխութիւն մը տեղի ունեցաւ Պարթեւաց
երկրին մէջ. Բուն Պարտկաստանի իշխաններէն մէ-
կը, Սասանի թոռ Արտաշիրը
դօրանալով, իր շտրջ հաւա-
քեց Պարթեւ վերջին թագա-
ւոր Արտաւան Ե.Է. գժզոհ ե-
զողները, երեք մեծ պատե-
րազմներու մէջ յաղթեց Ար-
տաւանին, զայն սպաննեց
ու դահ բարձացաւ. Պարթե-
ւաստանը անկէ յետոյ կոչուե-
ցաւ. Պարտկաստան. Այս կեր-
պով հիմնուեցաւ Սասանեան Հարստութիւնը:
Պարթեւները երկար ատեն Հռոմայեցւոց և Յու-
նաց հետ շփուելով աւելի քաղաքակրթուած էին,
մինչ Սասանեանները աւելի ասիական էին և
կ'ուղէին ոչնչացնել ինչ որ յունական և հռոմէ-
ական էր:



ԱՐՏԱՇԵՐԻ ԴՐԱՄԸ

Խոսրով Բ. — Այս ատեններ Հայոց թագաւորն էր Խոսրով Բ. որ Արտաւան Ե.ի մօտիկ ազգականն էր։ Բնական է որ Արտաշիր լաւ աչքով չէր նայեր Խոսրով Բ.ի վրայ Եւ իրաւ ալ, Հայոց թագաւորը իր շուրջը հաւաքելով շատ մը Պարթեւ Արշակունիներ մեծամեծ պատերազմներ մղեց Արտաշիրի դէմ և յաղթեց ալ, բայց չկրցաւ կործանել Սասաննան Հարստոթիւնը։

Այս կո իւները երկար տեւեցին։ Արտաշիրի յաջորդ Շապուհ Ա. դիմեց խարդախութեան։ Անակ Պահլաւունի մեծ իշխանին մեծամեծ խոստութեր ըրտու եթէ սա կարենար զինքը աղատել Խոսրովէն։ Անակ ընտանիքով փախաւ եկառ Խոսրովի քով և խարդախութեամբ դայն սպաննեց։ Ասոր իբր վրէժ Հայերը սուրէ անցուցին Անակի լինտանիքը որմէ աղատեցաւ Գրիգոր անունով տղայ մը, որ կեսարիա տարա եցաւ։ Խակ Շապուհ տիրելով Հայաստանի հրամայեց ոչընչացնել Խոսրով Բ.ի ընտանիքը։ Այս կսոսրածէն աղատուեցան փոքրիկն Տրդատ զոր Արտաւադու Մամիկոննեան Հռոմիսյեցւոց կողմ փախցուց և անոր Խոսրովիդուխտ քոյլը զոր Օտա Ամատունի իշխանը իր քով տարաւ ու պահեց։

Անկէ յետոյ Հայաստան 25 սարիի չափ

Պարսկաստանի մէկ նահանդը եղաւ և կառավարուեցաւ պարսիկ սատրապներով։ Ի վերջոյ կռիւները նարէն վերսկսան, մինչեւ որ Հռոմայեցւոց Դիսկեախանս մեծ կայսրը ստիպեց պարսից վուամ Բ. արքան որ Հայաստանն ու Միջագետքը իրեն թողու։

Տրդատ հռոմայեցւոց քով մեծնալով իր քաջութիւններովը մեծ անուն մը վաստկած էր։ Կը պատմեն թէ անդամ մը կառքով մրցում կատարած ատեն իր հակառակորդը երբ զինքը խարդախութեամբ վար ձգեց, Տրդատ անոր կառաքին ետեւէն վաղեց և այնպէս ուժով մը բռնեց որ ձիերը չկրցան շարժիլ։ Տրդատ զինուոր եղաւ։ Հռոմէական բանակին մէջ։ Անդամ մը զինասրները ապստամբեցան իրենց պետին դէմ և կ'ուղէին սպաննել զայն։ Տրդատ մինակը կեցաւ իր պետին դրանը առջեւ ու չձգեց որ մէկը մօաենայ անոր։

Ուրիշ անդամ մըն ալ Տրդատ Հռոմի կայսեր փոխարէն զօտեմարտեցաւ թշնամի ցեղին թագաւորին դէմ և յաղթեց անոր։ Ասկէ կայսրը շատ զոհ մնաց և ուղեց որ Տրդատը նորէն իր հօրը զահը բարձրանայ։



ԴԱՍ ԺԵ.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆ



ՏՐԴԱՑ Գ. և Ա. Գ. ԼՈՒՍԱԿՈՐԻՉ

Պարսից և Հռոմայեցւոց համաձայնութենէն
վերջ Տրդատ թաղաւոր պատկուեցաւ և Հայոս-
տան եկաւ։ Հայ աղդը զինքը ոիբովվ ընդունեց
և Պարսից Վուամ թաղաւորն ալ ճանչցաւ անոր
թագաւորախիւնը։ Բայց երբ Վուամին յաջոր-
դեց ներսէն, կոխաները վերսկսան, որով հետեւ
ներսէն ալ իր նախորդներուն պէս կ'աւզէր Հռո-
մայեցիք Ասիայէն դուրս վռնաել։ Տիրելէ յե-
տոյ Հայաստանի, ներսէն յարձակեցաւ Հռոմա-
յեցւոց վրայ և անոնց յաղթեց։ Հռոմայեցիք
նոր բանակ մըն ալ զրկեցին բայց այս անդամ
ներսէն հաղիւ կրցաւ փախչիլ և աղատիլ։

Մծրինի մէջ կնքուեցաւ խաղաղութեան դա-
շինք մը որ 40 տարի խաղաղութիւն տուաւ աշ-
խարհի։ Այս նշանաւոր դաշինքով Հայաստան
կը մնար դաշնակից Հռոմի և իր սահմանները
կ'ընդարձակուէին։

Ահա այս խաղաղութեան տարիներուն էր որ
ողասահեցաւ մեր պատմութեան ամենէն նշանա-
ւոր դէպքերէն մէկը. — Հայ աղղը ընդունեց
Քրիստոնէութիւնը:

Այս մեծ դէպքը տեղի ունեցաւ 305 թուա-
կանին: Գաղղիս մեզմէ 191 տարի վերջ ըն-
դունեց Քրիստոնէութիւնը, Անդլիս՝ 300, իսկ
Գերմանիա՝ 500 տարի:

Քրիստոնէութիւնը մեր մէջ տարածողներն
եղան Մեծն Տրդատ և Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Տրդատէն և Լուսաւորիչէն առաջ ալ Հայոց
մէջ քրիստոնեաներ կային: Քրիստոսի աշակերտ-
ներէն Թաղէոս և Բարթողէմէոս քարոզութեան
եկած էին Հայաստան և հոն նահատակուած էին:
Մեծն Տրդատի օրով ան պաշտօնական կրօն դար-
ձաւ:

Հայաստանի լուսաւորիչը եղաւ Անտկի որդին,
որ, ինչպէս ըսինք, կեսարիս տարուած և իբր
քրիստոնեայ մեծցած և մկրտուած էր Գրիգոր
անուամբ: Ան հոն ամուսնացած և Վրթանէս ու
Արփատակէս անունով երկու զաւակներ ունեցած
էր: Յետոյ բաժնուելով իր ընտանիքէն Տրդատի
քով ծառայութեան մտած էր և Հայաստան եկած:
Տրդատ իմանալով Գրիգորի ով ըլլալը, զայն

բանտարկած էր։ Այս ատեններ կարեւոր դէպք
մը պատահեցաւ Հայաստանի մէջ։ Հռոմէն Հա-
յաստան փախած էր աղջիկներու խռոմք մը։
37 հոգի։ Այս խռոմքին պետն էր Գայիանէ,
բայց մէջերնէն ամենէն զեղեցիկն էր Հռիփսիմէ։
Ասոնք քրիստոնեայ էին և փախած էին Կայսեր
ձեռքէն, որ կ'ուղէր Հռիփսիմէն իրեն կին առնել։
Կայսրը երբ իմացաւ որ այս կոյսերը Հայաստան
փախեր են, զրեց Տրդատին որ փնտուէ ղանոնք
և Հռիփսիմէն իրեն զրկէ։ Երկար փնտութէ
յետոյ վերջապէս կոյսերը զտնուեցան։ Բայց
Տրդատ ուզեց որ Հռիփսիմէ իրեն թազո՞հի ըլ-
լայ։ Հռիփսիմէ մերժեց, որովհետեւ Տրդատն
ալ Կայսեր ողէս կոտպաշտ էր։

Ասոր զրայ Տրդատ ղայրացաւ և նահա-
տակեց բոլորը։ Կոյսերու նահատակութենէն
յետոյ, Տրդատ հիւանդացաւ։ Խոսրովիդուխու-
երազներուն վրայ Գրիգոր բանտէն հանեցին և
ան բժշկեց Տրդատը, որ ընդունեց Քրիստոնէու-
թիւնը։ Քրիստոնեայ զարձան նաև իր կինն ու
քոյրը և նախարարներէն շատերը։ Յետոյ թա-
դաւորն ու Գրիգորը շրջեցան Հայաստան և կոր-
ծանեցին մեհեանները, շինեցին եկեղեցիներ։

Դ Ա Ս Ժ Բ Ը .

Հայաստան

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼԵՆ

յետոյ

Հեթանոսական կրօնը անմիջապէս չընկճուեցաւ, Քուրմերը ապստամբուցան, յաղթուեցան և փնտացան: Որով նոր կրօնքը զէնքի ուժով տարածուեցաւ մեր մէջ:

Նորագարձներուն հոգեւոր տեսուչ պէտք էր: Գրիգոր 16 նախարարներու հետ կեսարիա գնաց, եպիսկոպոս ձեռնազրուեցաւ ու վերադրձին միրաեց թագաւորը, անոր ընտանիքը, նախարարները և բիւրաւոր մարդիկ: Շինեց եկեղեցիներ, օրինակ՝ Էջմիածինը և Ս. Կարապետը:

Յետոյ, Գրիգոր բացաւ դպրոցներ՝ նոր կրօնքը ուսուցանելու համար: Ռւսուցիչները յոյն էին և ասորի, որոնք այդ լեզուներով կ'ուսուցանէին, քանի որ հայերէն դիր ու զիրք չկար: Ամէն դասակարգի տղաք կ'ընդունուէին այդ դպրոցներուն մէջ, մանաւանդ քուրմերու տղաքը, Ասոնցմէ 42 ը եպիսկոպոս ձեռնազրուեցան:

Լուսաւորիչ եկեղեցիներու նիւթականին ալ հոգ տարաւ։ Մեհեաններու կալուածները եկեղեցին ու եկեղեցականներուն անցան։ Լուսաւորիչ ինքը, իբրև աղնուական, մեծամեծ կալուածներ ունէր։ Այսպէս որ, ժամանակ մը յետոյ, նախարարներէն ոչ մէկը կրնար հաւասարիւ կաթողիկոսութեան՝ հարստութեան և ուժի կողմէ։ Այս կերպով կաթողիկոսները շատ ազդեցիկ դարձան։

342 Թուականին Հայերը այնքան ջերմ քըրիստոնեայ էին որ երբ Մաքսիմիանոս կայսը ուղեց զէնքով հին կրօնքը վերահաստատել Հայաստանի մէջ, Հայերը զէնքի գիմեցին և յաղթեցին կայսեր։ Բայց կոստոնդիանոս կայսը 342 ին քրիստոնէութիւնը աղատ կրօնք հռչակեց և 323 ին ինքն ալ քրիստոնէութիւնը ընդունեց։ Այսպէս, Հայաստան և Հռոմ կրօնքով իրարումիացան և Պարսկաստան ա՛լ ուելի թշնամացաւ Հայաստանի։

Այս ատեններ պարսից թաղաւորն էր Շապուհ թ. որ 70 տարի թաղաւորեց։ Ան բնաւ գոհ չէր որ Հայեր և հռոմայեցիք կրօնքով իրարումիացան և դաշնակից ալ եղան։ Բայց բան մը չէր կրնար ընել, որովհետեւ Հռոմի հետ կնքած

դաշինքին ժամանակը չէր լրացած։ Ուստի աշխատեցաւ որ հայ նախարարները աղքատամիեցնէ Ցրդատի գեմ և որիշ թշնամիներ սաեղծէ։ Ասկայն Ցրդատ բարին ալ արժանի զասը տուաւ։

Հայաստան Ցրդատի ժամանակ խաղաղութիւն վայելելով այնքան զօրացած էր որ դրացի փոքր երկիրները՝ Վրաստան և Աղուանիստան՝ իր աղղեցութեան տակ ինկան։ Քրիստոնէութիւնը Հայաստանէն մտու Վրաստան և երկու աղղերը իւրարու հետ բարեկամուցուց։ Ցրդատ Վրաց թագուորին յանձնեց Հայաստանի հիւսիսային սահմաններու պաշտպանութիւնը, իսկ արեւելեան և հարստային սահմաններու պաշտպանութիւնն ալ յանձնեց հայ իշխաններու որպէսզի Հայաստանը Պարոից սանձդղութենէն պաշտպանեն։

Մեծն Ցրդատ մեռաւ 329 թուին, թողլով մեծ ու զօրաւոր Հայաստան մը։ Իրմէ առաջ մեռած էր Լուսաւորիչը։



ԴԱՍ ԺԱՄ.

ՏՐԴԱՏ Գ.Ի ՅԱԶՈՐԴՆԵՐԸ



Տրդատ Գ.Ի և Լուսաւորչի մահէն ետքը Հայաստանի պայմանները փոխուեցան։ Նախ, Պարսիկները շատ գժզո՞ն էին որ Հայեր կրօնքով իրենցմէ բաժնուեցան և յունասէր կուսակցածիւնը յաղթանակեց։ Յետոյ, նախարարները այնքան զօրացեր էին որ ա՛լ չէին հնազանդեր թագաւորին։ Ասոնք պարսկասէրներն էին և շատ անգամ Շապուհի դրդումնվ կը դորձէին։ Այս կուսակցաւթիւններէն զատ հիմա կար նաեւ հոգեւորականութիւնը, որ թագաւորին չափ ուժով էր։

Տրդատէն յետոյ պայքար մը սկսաւ թաղաւորին և պարսկասէր նախարարներուն միջեւ։ Հոգեւորականութիւնն ու յունասէրները շատ անգամ թագաւորին կողմն էին։

Խոսրով. — Տրդատին յաջորդեց Խոսրով Բ. Կոստակ։ Խոսրավ կը ջանար իր հօր զործը շարունակել։ Ան իր աղդեցութիւնը տարածեց նաեւ Վրաց և Աղուանից երկիրներուն վրայ և Վրիմանէսի որդին Գրիգորիսը անոնց վրայ եպիս-

կոսղոս նշանակեց։ Մամիկոննեան նախարարներու հետ ալ բարեկամ էր և Վաչէ Մամիկոննեանը կարգեց սպարապետ։

Եռուսավ նախարարներու մէջ կռիւ ծագեցաւ, մանաւանդ Մանաւազեանց և Որդոննեաց նախարարներուն միջեւ, որոնք թագաւորն ալ անպատճեցին։ Վաչէ սպարապետը, թաղաւորին հրամանաւ ջարգեց ու վերջացուց այս երկու տոհմերը։

Այս ատեններ Եապուհ գրդուց Մաղթաց Սանեսան թագաւորը որ Հայաստան արշաւէ։ Բայց Վաչէ անոր յաղթեց և Վահան Ամաստանի անոր զլուխը կարեց։

Խոսրով իր զահը փոխադրեց Դուխն և շինարարութիւններ ըրաւ։

Երբ քառանամեայ գաշինքը վերջացաւ Եապուհ Հայաստանի սահմաններուն մօտեցաւ և ապստամիեցուց Բզնուննեաց և Աղձնեաց իշխանները, որոնք Վաչէն սպաննուեցան։ Յետոյ, Եապուհ ինք եկաւ Հայաստան, բայց պարտուցաւ։ Հերսոն Վաչէն ալ ինկաւ ոյս պատերազմին մէջ։

Խոսրով թագաւորեց 10 տարի։ Ան իր կեանքը պատերազմներով անցուց։ Թէեւ յաղթեց պարսկասէր կուսակցութեան, բայց չկրցաւ

վերջ տալ անոնց փափաքներուն։

Տիրան. — Խոսրովի որդին Ցիրան, թոյլ և անհաստատ բնաւոլութեան տէր էր։ Ինք չէր սիրեր ո՛չ հռոմէացիները և ո՛չ ալ պարսիկները։ Ցիրան եթէ կրնար միանալ կաթողիկոսին ու նախարարներուն հետ շատ մեծ զործեր պիտի կրնար տեսնել, որովհետեւ պարսիկներն ու հռոմէացիք որիշ տեղեր պատերազմի մէջ էին։ Բայց ան չէր սիրեր նաեւ եկեղեցականներն ու նախարարները։ Ան ձեծի տակ սպաննել տուաւ Յոսոիկաթողիկոսը, որովհետեւ աս զինքը յանդիմանած էր իր անվայել կեանքին համար, և խեղպել տուաւ Դանիէլ եպիսկոպոսը, որ այս պատճառաւ հրապարակաւ դինք յանդիմանած էր։

Եկեղեցականներն ու թագաւորը, այսովէս, իրարու հետ գժաեցան։ Այս յանդրին մէջ մեծ զեր խաղաց նաեւ Հայր Մարգարեար. որ թագաւորի կալուածներուն վրայ էր հոկէր և հակառակ էր հոգեւորականներուն և նախարարներուն, որոնց կալուածները կ'ուղէր զրաւել։

Նապուհ, օդառւելով հռոմէացւոց ուրիշ տեղ պատերազմով զբազած ըլլալէն, խարելով Ցիրանը իր քով տարսու և աշքերը փորել տուաւ։ Ան կ'ուղէր Հայաստանը նորէն զրաւել։

Դ Ա Ս Ի Ւ.

Ա Ր Ը Ա Կ Բ .

Ուշակի քազաւորութեան առաջին տարի-
ները.— Եապուհ կ'ուղէր Հայաստանը Պարսկաս-
տանի մէկ նահանգը դարձնել, ոտկայն Հայերը
հակառակի եցան և կոստանդ կայորէն օգնութիւն
խնդրեցին։ Կայորը անձամբ եկաւ Հայաստան և
Հայոց օգնութեամբ յաղթեց Եապուհի, որ իր
ընտանիքը գերի ձգելով փախաւ։ Յետոյ հաշ-
տամութիւն եղաւ և Հայաստանը Հռոմէացւոց գե-
րիշխանութեան տակ անցաւ։ Գերիները ար-
ձակուեցան ու Տիրանն ալ ետ դարձաւ։ Թագա-
ւոր եղաւ Արշակ Բ. (350 - 363)։

Բայց նոր թագաւորին գործը գժուար էր։
Ան պիտի հանգստացնէր նախարարները և բա-
րեկամ պիտի մնար թէ՛ Հռոմայեցիներուն և թէ
Պարսիկներուն, ինչ որ դիւրին չէր։

Իրեն կապեց հռոմէատէր նախարարները,
կարեւոր պաշտօններ յանձնելով անոնց։ Լուսաւոր-
չին ցեղէն Ներսէսն ալ, որ դարդացած ու մեծ մարդ-
մըն էր, նախ իր քով քարտուղարութեան առաւ
և յետոյ դայն կտթողիկոս ընտրել տուաւ, Պար-

կասէր նախարարները դո՞հ չմնացին այս բաներէն:

Արշակ հռոմայեցւոց հետ սիրով կ'ապրէր և
կայսեր ընտանիքէն Ողիմպիադա անուն աղջկան
մը հետ ամուսնացած էր: Ան կ'աշխատէր բա-
րեկամ մնալ նաեւ Շապուհին: 43 տարի այս-
պէս անցաւ:

Հռոմայեցւոց Յուլիանոս Ուրացող Կայորը
Միջազետք եկաւ Պարսից դէմ պատերազմի: Ան
Արշակի հետ դէշ վարուեցաւ ու բարկացաց զայն:
Յուլիանոս մեռաւ պատերազմի մէջ և բանակը
կայսր հռչակեց Յովիանոսը, որ հաշտուեցաւ Պար-
սից հետ: Ան Հայաստանի մէկ մասը Պարսիկ-
ներուն տուաւ, նաեւ Հայաստանէն հեռացաց իր
զօրքը: Արշակ մնաց անօգնական:

Արշակ կը զժի Մեծն Ներսէսի հիտ: —
Մեծն Ներսէսի օրով եկեղեցին ու եկեղեցակա-
կանութիւնը շատ զօրացան: Մեծն Ներսէս ա-
մէն կողմ շինեց վանքեր որոնք լեցուեցան վար-
դապետներով և արեղաններով: Շինեց նաեւ գլու-
րոցներ: հիւանդանոցներ: անկելանոցներ, օտա-
րանոցներ և այլն և բոլորին ալ եկամուտներ
սահմանեց: Հոգեւորականները շատ հարստացեր
էին և իշխաններէ աւելի ազգեցիկ էին: Նա-
խարարները այս բանը չէին կրնար տանիլ ու կը

զրդուին թաղսուրը որ անոնց ձեռքէն հողերը
խլէ: Եւ որովհետեւ Ս. Ներսէսն ալ միշտ կը
խառնաւէր թաղտորի գործերան, իրենց յարա-
բերութիւնները պազեցան: Ու երբ Արշակ ստա-
խօս նախարարներէն խարուելով սպաննեց Գնէլը,
որ Պոլսէն նոր վերագործեր էր և կը սիրուէր
ամէնքէն, ու քիչ յետոյ ամուսնացաւ անոր Փա-
ռանձնմ անուն կնոջ հետ: Ս. Ներսէս դժուեցաւ
Արշակի հետ և գործերէ քաշուեցաւ: Անկէ յե-
տոյ: Հոգեւորականները ա'լ կարեւորութիւն չէին
տար Արշակին:

Արշակ եւ նախարարները: — Բայց Ար-
շակ դժուեցաւ նաեւ նախարարներուն հետ: Թա-
ղտորը կ'ուղէր որ անոնք իրեն հօգատակին, իսկ
նախարարները չէին ուղեր: Ուստի ան Մասիսի ստո-
րաը շինեց նոր քաղաք մը՝ Արշակաւան՝ և հրաման
հանեց թէ ով որ հոն զայ բնակի, ինչ յան-
ցանք ալ որ գործած րլլայ սիստի ներուի: Ամէն
տեսակ զէշ մարդիկ հոն հաւաքուեցան: Արշակ
կ'ուղէր անոնցմէ նոր բանակ մը կազմել: Ուս-
տի դժուհ նախարարները միացան ու գացին կոր-
ծանեցին Արշակաւանը և բնակիչները կոտորեցին:
Անկէ զատ Արշակ սպաննել տուաւ իրեն հակա-
կառակորդ նախարարներէն ոմանք:

Այս բաները կ'ըլլային ճիշդ ա՛յն ժամանակ
երբ Յովիանոս կայսրը իր դաշինքը կը գնէր
Պարսիկներուն հետ Որով, Արշակ, լքուցառ-
թէ՛ հռոմայեցիներէն, թէ՛ հայ հողեւորականու-
թենէն, և թէ իր նախարարներէն:

Փառանձեմ Թագուհին. — Արշակի իր նա-
խարարներուն հետ ունեցած վէճերուն մէջ միծ
դեր խաղաց Փառանձեմ թագուհին:

Փառանձեմ Սիւնեաց իշխանի աղջիկն էր,
գեղեցիկ և խելացի: Ան ամուսնացած էր Գնէլի
հետ, որ Արշակի եղբօրորդին էր: Արշակ Գնէլը
սպաննել տալէ յետոյ իրեն կին առու Փառան-
ձեմը: Երբ Արշակի առաջին կինը մեռաւ, Փա-
ռանձեմը եղաւ թագուհի:

Սիւնեաց իշխանները պարսկասէր ըլլալով
Արշակի պալատին մէջ զօրացաւ պարսկասէրնե-
րու կուսակցութիւնը:

Ասիկա գործին չէր զար իհարկէ յունասէր-
ններուն, որոնց զլխաւորներէն էր Մամիկոնեան
նախարարութիւնը, որոնց շնորհիւն էր որ Ար-
շակ դահ բարձրացեր էր: Որովհետեւ Գնէլի
սպանութեան գործին մէջ դեր ունեցեր էին նա-
եւ Մամիկոնեանները, Փառանձեմ Արշակի միջո-
ցաւ իր վրէժը լուծեց:

Բայց Արշակի դիրքն ալ շատ ոկարացաւ:

ԴԱՍ ԻԸ.

ԱՐԾԱԿԻ և ՓԱՌԱՆՁԵՄԻ ՄԱՀԸ



Արշակէն դժգոհ նախարարներէն Մեհրուժան
Արծրունին, որ կ'երազէր Հայաստանի թագաւոր
դառնալ, գնաց Շապոհի մօտ, ուրացաւ իր կը-
րօնքը և հայոց թաղաւոր դառնալու խոստումը
առնելով պարսիկ զօրքով եկաւ Հայաստան։ Նա-
խարարներէն որիշներ ալ կային որ իրեն համա-
ձայն էին, օրինակ Վահան Մամիկոննեանը, որ,
նոյնպէս իր կրօնքը ուրացաւ և ամուսնացաւ Շա-
պոհի քրոջը հետ ու մեծ պաշտօն մը ստացաւ։
Եւ այս բաները Պարսից թագաւորին դործին կու-
գային, որովհետեւ ան կ'ուղէր կործանել Արշա-
կոնեաց թագաւորութիւնը, Հայերը կրակապաշտ
գարձնել ու Հայաստանը իր երկրին կցել։

Մեհրուժան և Վահան շատ անգութ վերա-
բերում ունեցան Հայաստանի մէջ։ Անոնք նոյնու-
իսկ քանդեցին Արշակունի թագաւորներուն գերեզ-
մանները և ոսկորները դուրս հանեցին։ Բայց
Արշակի հետ մնացեր էր հերոս Վասակ Մամի-
9

կոնեանը, որ մէկ քանի անդամ յաղթեց այս
ուրացող իշխաններուն:

Երբ Արշակ բոլորովին անօդնական մնաց,
Շապուհի հրաւէրով զնաց Պարսկաստան իր Վա-
սակ սպարապետին հետ Շապուհ, հակառակ
որ խօսք տուած էր Արշակին որ վնաս պիտի
չհասցնէ իրենց, երկոքն ալ բանարկեց Անյուշ
բերդը, ուր Վասակը մնրթազերծ ըրսաւ, իսկ
Արշակ անձնասպան եղաւ:

Շապուհ, առա զօրք զրկեց Հայաստան: Փա-
ռանձեմ թագուհին իր Պապ որդիին հետ ամրա-
ցաւ. Արտադերս բերդին մէջ: Վասակի որդին Մու-
շեղ, ուրիշ իշխաններու հետ դիմեց Վաղէս կայո-
րին. իսկ Պապ կտրելով Պարսից շղթան դուրս
ելաւ բերդէն, զօրք ժողվեց և նեղոթիւններ
տուաւ Պարսից որոնք զուր աշխատեցան զինքը
բռնել:

Բայց Արտադերս բերդը ինկաւ և Պարսիկ-
ները Հայոց քաջ և զեղանի թագուհին՝ Փառան-
ձեմը՝ զերի տարին ու վատարար սպաննեցին:

Յետոյ Պարսից զօրքը ցըռեցաւ Հայաստան
և զրաւեց բերդերը, մինչեւ որ օգնութեան հա-
սան հռոմէական զօրքերը,

Դ Ա Ս Ի Բ Բ.

Պ Ա Վ

Մեր զօրեղ և հեռատես թաղաւորներէն մէկը եղաւ Պապը, որ թագաւորեց 369—374 թվականին։

Պապ երիտասարդ էր երր դահ բարձրացաւ։ Անիկա կ'ուղէր հաշտ ապրիլ թէ՛ Հռոմի հետ և թէ Պալոկաստանի հետ։ Ուստի աշխատեցաւ իրեն կապել պարոկասէր նախարարները։ Բայց Մուշեղ և Տերենդիոս յոյն զօրապետը դժգոհ մնացին։

Պապ շատ կը յարգէր նաև Ա. Ներսէսը, զոր նորէն պաշտօնի կոչեց։ Ներսէս սկսաւ շարունակել իր սկսած դործը։ Նորէն աղքատանոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, կուսանոցներ սկսան շինուիլ ամէն կողմ։ Եկեղեցիներն ու վանքերը շատցան և մեծամեծ ծախսերու դուռ բացին ժողովրդեան համար, որ պատերազմներէն արդէն աղքատացած էր։ Ներսէս նորէն մեծ աղղեցութիւն ձեռք բերաւ և կ'ուղէր որ թաղաւորն ալ իրեն ենթարկուի։ Իսկ թաղաւորը կ'ուղէր որ ամէն բան իր ձեռքը կեդրոնանայ։

Այս ատենները յանկարծ մեռաւ Ա. Ներսէսը
և Պապը ինքովինքը ազատ զգաց։ Կ'ուղեր որ
եկեղեցականները իրեն ենթարկուին։ Աւատի
չձգեց որ Ներսէսի յաջորդը Յուսիկ Բ. Կեսարիա
երթայ յոյն եպիսկոպոսէն կաթողիկոս ձեռնադրու-
ուելու, այլ հայ եպիսկոպոսներէն ձեռնադրել աբ-
ւաւ։ Պապի օրով Հայոց եկեղեցին անկախ դարձաւ։

Յետոյ ան փակեց Ներսէսի հիմնած բարե-
գործական հաստատութիւններէն շատերը։ Աղ-
քատներուն հրամայեց աշխատիլ, վանքերու, ե-
կեղեցիններու կալուածները ետ առաւ և դիւզա-
ցիններու վիճակին հող տարաւ։ Մէկ խօսքով
ան կ'ուղէր բարեկարդ և զօրաւոր Հայաստան մը
ունենալ, բայց զոհ գնաց յունասէր նախարար-
ներու դաւին։ Վաղէս կայորը հաւատալով Պա-
պի հակառակորդներուն, իր քով կանչեց Հայոց
երիտասարդ թագաւորը՝ Կիլիկիա։ Պապ գնաց
և պատիւններով ընդունուեցաւ։ Բայց յետոյ կաս-
կածելով թէ Կայորը զինքը պիտի ձերբակալէ,
բանակէն փախաւ եկաւ Հայաստան։ Եւ կայորը
կասկածելով թէ Պապը Պարսից կողմ պիտի անց-
նի հրամայեց իր զօրապետին որ զայն սպաննէ։
Յոյն զօրապետը ճաշի հրամիրեց Պապը և դա-
ւադրութեամբ դայն սպաննեց։

ԴԱՍՍ Ի՞՞.

ԱՐԾԱԿ և ՎԱՂԱՐԾԱԿ.

Հայաստանի առաջին բաժանումը



Պապի մահը զայրացուց նախարարները . ա-
նոնք պահ մը մտածեցին Պարսից կողմն անցնիլ ,
բայց տեսնելով թէ տափկա աւելի վտանգաւոր
պիսի ըլլայ , որոշեցին նորէն Վաղէսին դիմել և
նոր թագաւոր մը խնդրել : Կայորը թագաւոր
նշանակեց երիսասարդ և քաջ Վարազդատը . ա-
կանջ չկախելով , Շապուհին , որ կ'առաջարկէր
Հայաստանը բաժնել իրենց միջեւ :

Նոր թագաւորը թէև քաջ բայց բուակա-
նաշափ խելացի մէկը չէր , եւ Մուշեղ Մամի-
կոնեանը կը հսկէր անոր վրայ որ հռոմայեցւոց
հետ բարեկամ մնայ : Իսկ թագաւորը կ'ուղէր
բարեկամանալ Պարսից հետ : Ասոր վրայ թըշ-
նամութիւն ինկաւ իր և Մուշեղի միջեւ : Իսկ երբ
Մուշեղ կայսեր առաջարկեց որ Պարսից և Հո-
նաց գէմ գնելու համար սահմաններու վրայ
ըերդեր շինէ և զանոնք հռոմէական զօրքերով
լեցնէ : հակառակորդ նախարարները Վարազդա-
տը համոզեցին թէ՝ Մուշեղ Հայաստանը հռո-

մայեցւոց տալ կ'ուզէ. թագաւորը հաւասալով
ճաշի կանչեց Մուշեղը և զայն սպաննեց։ Առոր
վրայ Մանուէլ Մամիկոննեան զիւցաղն նախարա-
րը մեծ պատերազմի մը մէջ յաղթեց վարազ-
դատին, Հայաստանէն վռնաեց և ինք եղաւ իշ-
խանապետ։

Մանուէլ 7 սարի կառավարեց երեխրը խո-
ղաղութեամբ։ Պարսիկները զինքը կը սիրէին,
իսկ Կայսրը ուրիշ տեղ զրադած էր։ Մանուէլ
ջնջեց Պապի կարգադրութիւնները և վերանորո-
գեց Ս. Ներսէսի զործը։ Հայաստան խաղաղ
շրջան մը ունեցաւ նորէն։ Մանուէլ Պապի կի-
նը՝ Զարմանդուխտ՝ թագուհի յայտարարեց և ա-
նոր երկու փոքր դաւակները՝ Արշակ և Վաղար-
շակ՝ թագաւոր ըրաւ։ Իր աղջիկը տուաւ Արշա-
կին և ինք եղաւ թագաւորահայր, բարեկամանա-
լով Պարսից։ Եապուհ շատ զոհ մնաց և նուէր-
ներ զրկեց Մանուէլին։ իսկ Արշակին և Վաղար-
շակին ալ՝ թագեր։ Եապուհ Սուրէն զօրապետն
ալ զօրքով զրկեց Հայաստան զայն պաշտպանե-
լու համար։

Սակայն քիչ յետոյ մեռաւ Վաղարշակը և
Արշակ Ք. մինակ թագաւորեց։

Աւելի վերջը Մեհրուժան թշնամութիւն

ձգեց Մանուէլի և Սուրէնի միջեւ։ Անոնք նոյնական պատճեն է Սուրէն յաղթուեցաւ։ Այս իրավունքը մէջ ինկաւ փառասէրն Մեհրուժան։ Քիչ յետոյ մեռառ նաեւ Մանուէլը։

Արշակ երիտասարդ էր ու չկրցաւ զսպել նախարարները։ Պարսկասէրներ Շապուհի զիսեցին և նոր թագաւոր մը խնդրեցին։

Թէսպոս կայսրը, որ ուրիշ կողմ զբաղած էր պատճեռագմով, ուղեց հաշտուիլ Պարսից հետառաջարկեց բաժնել Հայաստանը։ Շապուհ Գ.ի ուղածն էր այդ. Բարձր Հայք և Ծովիք Հռոմայիցւոց անցաւ իսկ մնացեալը՝ Պարսից։ Արեւմտուն կամ Յունաց Հայաստանը շատ փոքր էր, բայց կարեւոր էր կայսեր համար։

Արշակ չուղեց մնալ պարսկական բաժնի մէջ և խումբ մը նախարարներու հետ անցաւ յունաց բաժինը, որուն մայրաքաղաքն էր Կարին։

Հայաստանի այս առաջին բաժանումը աեղի ունեցաւ 384 թուին։

Թէսպոս կայսեր այս յիմար քոյլը քանդեց 500 տարիներէ իմբեր Հռոմայիցւոց կերուած ամրող գործըն Ան տկարացւ Հայաստանը և ճամրայ բացաւ բարյարուներուն, որոնք օր մըն դացին վերջացուցին Բիւղանդիոնի կայսրութիւնը,

Պ Ա Ս Ի Դ Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Խոսրով Գ. — Շապուհ Գ. անմիջապէս չի վերջացուց Արշակունեաց թագաւորութիւնը։ Ան իր բաժնի վրայ թագաւոր զրաւ Խոսրով, որ Արշակունի էր։ Ասոր վրայ յունաց բաժնին զացող նախարարներէն շատերը իրենց տեղերը վերադարձան։ Հեկողներուն կալուածները Խոսրով զրաւեց։

Արեւմտեան Հայաստանի թագաւորութեան վախնանը. — Այս կերպով յառաջ եկաւ երկու թագաւորութիւն։ Քիչ վերջ անոնց մէջ կոյւծագեցաւ և Արշակ յաղթուեցաւ։ 386 ին մեռաւ Արշակ և Թէսդոս կայսրը ա'լ իր բաժնի Հայաստանի վրայ թագաւոր չդրաւ և զայն դարձոց իր երկրին մէկ նահանգը։

Արեւելեան Հայաստան. — Իրենց թագաւորի մահէն յետոյ հայ նախարարները չուզեցին ենթարկուիլ յունաց։ Խոսրովէն խնդրեցին իրենց կալուածները ետ տալ որ վերապառնան։

Այդուհես ալ եղաւ։ Խոսրով Հայոց կաթողիկոս ըրաւ Մեծն Ներսէսի որդին Սահակ Պարթեւը Յետոյ կայսրէն խնդրեց զինքը ճանչնալ նաեւ յանաց բաժնի թագաւոր և կայսրը ընդունեց Արով Հայաստանը նորէն միացաւ։ Բոյց այս բաները պարսկասէր նախարարներուն հաճելի չժռւեցան, որսնք Վռամ Դ. ին գիմնցին և Խոսրովը ներկայացուցին իրրե յունասէր։ Վռամ Պարսկաստան կանչեց Խոսրովը, դահէն զրկեց և աքսորեց Անյուշ բերդը։ իսկ Սահակ Պարթեւը աթոռէն զրկեց։

Վռամօապուհ. — Վռամ Հայոց թագաւոր նշանակեց Վռամշապուհը, որ Խոսրովի եղբայրն էր։ Նոր թագաւորը հեռատես և խմաստոն էր։ Առ Սահակ Պարթեւը Պարսից Արքային քով զըրկեց։ Առաջին անդամն էր որ Լուսաւորչի ցեղէն կաթողիկոս մը պարսից թագաւորին քով կ'երթար։ Վռամ մեծ պատիւներ ըրաւ կաթողիկոսին, վերադարձուց անոր իշխանութիւնը և ընդունեց անոր բոլոր խնդրանքները։

Վռամշապուհ 25 տարի խաղաղ կերպով թագաւորեց։ 40 ամեայ խաղաղութեան տարիներէն յետոյ, այս նոր շրջանին, Հայաստան շունչ առաւ։ Այս ատեհնն էր որ տեղի ունեցաւ Գրոց Գիւտը։ Վռամշապուհ թագաւորեց 390էն 415։
40

ԴԱՍ ԻԵ.

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԸ



Գիրերու Գիւտին պատճառը. — Քրիստոնէութիւնը Հայոց մէջ քարոզուեցաւ նախ թագէոս և Բարթողէմէոս առաքեալներու. միջոցաւ, սակայն չկրցաւ արմատ բռնել. Երկրորդ անգամ քարոզուեցաւ Ա. Գրիգոր Լուսառորչի կողմէ և այս անգամ՝ թէսկէտ ան յաջսպեցաւ, բայց Հայոտանի շատ մը վայրերուն մէջ մարդիկ դեռ կը շարունակէին հետեւիլ հին կրօնքին. Ասոր պատճառն ալ այն էր որ հայերէն զիրեր չկային. Եկեղեցիներու մէջ Ա. Գիրքը յունարէն կամ ասորերէն լեզուով կը կարդային և ժողովուրդը շատ բան չէր հասկնար նոր կրօնքէն:

Պապ թագաւորը թէե հայ եկեղեցին անկախ դարձուց, սակայն հայ եկեղեցականները, զրերու չգոյութեան պատճառաւ, ստիպուած էին ասորերէն և յունարէն սորվիլ և այդ լեզուներով կատարել եկեղեցական արարողութիւնները:

Վուամշապուհի թագաւորութեան ժամանամէ

Հայոց համար սեփական զիր գտնելու խնդիրը
շատ մեծ կարեւորակթիւն մը ստացած էր:

Այս կարեւորակթիւնը աւելի շեշտեց Ս.
Մեսրոպը երբ Հայաստանի արեւելեան գաւառնե-
րը քարողչութիւն ընելէ վերադարձաւ Վաղար-
շապատ Ս. Սահակի և Վուաշապուհի մօտ: Ս.
Մեսրոպ անոնց բացտարեց սեփական զիրեր զըտ-
նելու անհրաժեշտութիւնը: Կաթողիկոսն ու
թաղաւորը որոշեցին ուժ տալ Ս. Մեսրոպին:

Ինչպէս գտնուեցան Գիրերը: — Սեփական
զիրեր գտնելու գաղափարը Պարսից տէրութեան
ալ հակառակ չէր, քանի որ անոնք ալ կ'ուզէին
որ Հայերը յոյներէն բարորավին գտառեին: Թւա-
ռի Ս. Մեսրոպ որոնումներու ելաւ: Այդ զիւ-
տը տեղի ունեցաւ Սամուստա քաղաքին մէջ: Այս
զէպքը այնքան մեծ ու կարեւոր էր Հայոց հա-
մար, որ ժողովուրդը ասոր մէջ Աստուծոյ մատը
տեսաւ:

Ս. Մեսրոպ իր նոր զիրերը Հռովհանոս անուն
յոյն զեղաղիրի մը ցացուց որ աւելի զեղեցկա-
ցաւց զանոնք և բերաւ Հայաստան: Այդ օրը
Հայոց համար մեծ օր մըն էր: Այս զիւտը ե-
ղաւ 412 թուականին:

Գրոց Գիւտին նետեւանել: — Ս. Սահակ և

Ս. Մեսրոպ անմիջապէս աշակերտներ հաւաքեցին, անոնց սորվեցուցին հայերէնը և սկսան թարգմանութիւններու Եկեղեցիներու մէջ ժամերգութիւնները սկսան հայերէն կատարուիլ և Քրիստոնէութիւնը աւելի սարածուեցաւ Ամէն կողմ բացուեցան վանքեր և անոնց կից դպրոցները Ամենէն կարեւոր դպրոցն էր Վաղարշապատինը:

Յետոյ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ կօի չափը ընդունակ աշակերտներ զրկեցին այն ատենուան նշանաւոր քաղաքները, — Ազեքսանդրիա, Աթէնք և Պոլիս — որ աւելի բարձր կրթութիւն ստանան: Այս աշակերտները երբ վերադարձան, իրենց հետ բերին Ասսուածաշտնչի յաւ օրինակներ, որոնց վրայէն Ս. Սահակ և Ս. Մեսրոպ իրենց նախապէս կատարած թարգմանութեանց պակասաները լրացուցին: Այս թարգմանութեամբ հայոց լեզուն ալ մշակուեցաւ և կատարեալ եղաւ: Գիրերու գիւտով Հայը իր կիսավայրենի վիճակէն դուրս եկաւ և Ազգ մը եղաւ:

Ս. Սահակ, Ս. Մեսրոպ և իրենց աշակերտները կը կոչուին Թարգմանիչներ, իսկ իրենց շրջանը՝ Ռսկեղար:

Ս. Մեսրոպ Ազսւանիստան և Վրաստան եր-

թարսվ անոնց համար ալ գիրեր դտու: Յետոյ
անցաւ. Պոլիս, ներկայացաւ Թէսպոս Բ. կայորին
և յունաց Պատրիարքին ու յունաց բաժնի Հայաս-
տանի մէջ ալ քարտղելու և սորվեցնելու արտօ-
նաթիւն սահացաւ:

Կիրեցու զիւտով Հայ ազգը զատուեցաւ Ա-
րեւելին եւ մտով կապուեցաւ Եւրոպայի: Իսկ
ասիկա շատ մեծ հետեւանքներ ունեցաւ մեր
ազգին համար: Մենք դարձանք եւրոպական
զաղափարներու և եւրոպական քաղաքակրթու-
թեան տարածիչը արեւելքի մէջ:

Մինչեւ այսօր ալ այսպէս է տակաւին:



Դ Ա Ս Ի Զ .

ԱՐԾԱԿՈՒԽԵԱՅ ԹԱԳԱԼԻՈՐՈՒԹԵԱՆ
ԱՆԿՈՒՄԸ



Խոսրով եւ Շապուհ. — Պարսից Յաղկերտ
Ա. թաղաւորը Խոսրովը Անյուշ բերդէն հանելով
կրկին նոտեցուց Արշակունեաց զահուն վրայ.
Բայց Խոսրով միայն 8 ամիս ապրեցաւ. Յաղ-
կերտ Հայոց վրայ թաղաւորցուց իր որդին Շա-
պուհը, որ կամաց կամաց պիտի պարսկացնէր նա-
խարարները. բայց հայ իշխանները բնաւ չսիրե-
ցին զինքը և զայն կ'անարդէին. Շապուհ երբ
ծածուկ Հայաստանէն փախաւ Պարսկաստան իր
հօրը յաջորդելու համար, պատուիրեց իր զօրա-
պետին որ ձերբակալէ նախարարները և իրեն
զրկէ. Հայերը միաբանեցան և ջարդեցին պար-
սից զօրքը, հրամանատարն ալ սպաննեցին. Վը-
ռամ Ե. նոր բանակ մը զրկեց Հայերը պատժելու,
բայց Սահակ Պարթեւ հաշտեցուց նախարարները
Վռամի հետ, որ Հայոց վրայ թագաւոր զրաւ
Վռամշապուհի որդին Արտաշէսը (422-428). Սա-
կայն այս երիտասարդ թաղաւորը անարժան մէկն

էր և անփորձ։ Նախարարները խորհուրդ ըրին
և սրոշեցին դիմել Վռամին որ դահընկեց ընէ
Արտաշէսը։ Անանք կաթողիկոսէն ալ պահանջեցին
որ իրենց միանոյ, սակայն հեռատես կաթողիկո-
սը խնդրեց իրենցմէ որ չընեն այդ բանը։ «Մեր
հիւանդ ոչխարը օտար առողջ դույլէն աւելի լա-
է» պատասխանեց։ Նախարարները բարկացան
կաթողիկոսին ալ և զիմեցին Վռամին, զանդա-
տելով թէ՛ թաղաւորի և թէ կաթողիկոսի մա-
սին։ Պարախիկ թաղաւորի ուղածն էր այդ։ Ան
իր քով կանչեց թաղաւորն ու կաթողիկոսը, եր-
կուքն ալ պաշտօնկանկ ըրաւ և չձգեց որ Հայա-
տան վերադառնան,

Վռամ Հայատանը ըրաւ Պարսկաստանի մէկ
նահանդը և զրկեց Վեհամիհրշապուհ մարզպանը
զայն կառավարելու համար։ Սարմանէ անուն ե-
պիսկոպոսն ալ կաթողիկոս նշանակեց։ Այս
նշանաւոր դէպքը տեղի ունեցու 428 թուակա-
նին։

Այսպէս վերջացաւ Արշակունեաց թաղաւո-
թիւնը որ տեսեց 362 տարի։ Սահակ Պարթե-
ով կը վերջանայ նաեւ Լուսաւորչի ցեղին կա-
թողիկոսութիւնը։

Արշակունեաց քազաւորութեան կործանման պատճառները. — Արշակունեաց կործանդիսաւոր պատճառներն են. —

1. Հայաստան կը գանուէր երկու հակառակորդ մեծ պետութիւններու մէջտեղը — Հըռուսի և Պարսկաստանի, որոնք կ'ուղէին տիրել մեր երկրին:

2. Արշակունի թագաւորներու մէջ խելացի և զօրաւոր մարդիկ քիչ եղան և չկրցան նախարարները միացնել:

3. Լուսաւորչի ցեղէն կաթողիկոսները միշտ յունասէրներու կողմը բռնեցին:

4. Հայ ժողովաւրդութեած կրթուած չէր: Բայց ինչքան որ թագաւորութիւնը կործանեցաւ, երկիրն ալ երկուքի բաժնուեցաւ, կը մնար սակայն նախարարութիւնը, զօրաւոր էր եկեղեցին և Հայը գտած էր իր զիրերը, որ զինքը նոր ի նորոյ աղք պիտի դարձնէր ու քաղաքակրթուած աղքերու կարգը անցնէր:



ԴԱՍ ԻՒ.

ՀԱՅՈՑ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ
ԱՐՏԱՂԵԿԱՆԻ և ԱՐՂԱԿՈՒՆԻԱց
ՀԱՐԱՏՈՒԹԻԱՆ օՐՆՎ



Թագաւորն ու յաջորդութեան օրէնիլ.—
 Հայ թաղաւորները եղած են բացարձակ միա-
 պեաներ։ Մնացեալ բոլոր մարդիկը իրենց ծա-
 ռաներն էին։ Հայ թաղաւորը օրէնոդիր էր. զօր-
 քին վերին հրամանաւարը, դատաւորը և հե-
 թանոսաթեան շրջանին՝ նաև քրմապետը։ Իր
 իշխանութիւնը ժառանգական էր. անդրանիկ
 դաւակը կը յաջորդէր հօրը։

Ուրիշ ազգերու կտուալարութեան ձեն աւ
 ասկէ տարբեր չէր։

Նախարարութիւնները. — Սակայն հայ
 թաղաւորը իր շուրջը ունէր խորհրդականներ և
 բարձր պաշտօնեաներ, որոնք կը կոչուէին նա-
 խարաց։

Այս նախարարներու ծագման պատմութիւնը
 որոշ չէ։ Անոնցմէ շատերը հին ուրարտական
 41

շրջանէն մնացած էին, Ուրեմն անոնք բնիկ էին, ինչպէս բնիկ էին Արտաշէսեան Հարատութեան թագաւորները։ Բայց Արշակունիները եկւոր էին, Պարթեւ, և հետզհետէ հայոցան։

Սակայն այս նախարարները իրենց ծաղման մասին զանազան պատմոթիւններ շինած էին։

Տրդատ Ա. ի օրով հայ նախարարութիւններու մէջ կարգ աւ կանոնը աւելի որոշ դարձաւ, բայց անոնք աւելի զարգացան Տրդատի յաջորդներու օրու, պարսից աղդեցութեան տակ։

Տրդատ՝ Բագրատունի նախարարներուն տուառքադիր ասպետութեան իրաւոնքը, Մամիկոններուն՝ սպարապետութիւն։ Արշակունիաց օրով հայոց բանակը 120,000 անձ կը հաշուէր։ Կարեւոր պաշտօն էր նաև հազարապետութիւնը։ Այս պաշտօնը Տրդատ յանձնած էր Գնունիներուն։ Թաղաւորի թիկնապահ դունդերու հրամանատարն էր Խորխոսունեաց տունը, որ կը կոչուէր մաղխազ։ Իսկ թաղաւորի կալուածներու, գանձերու, ամրոցներու և կանանցի պահպանութիւնը տրուած էր մարդպետականներուն և պաշտօնեան կը կոչուէր հայր-մարդպետ։ որ փորձառու, խելացի մարդ մը պէտք էր ըլլար։ Կային տակաւին ուրիշ շատ մը պաշտօններ։

Կային նաև բգեցիներ, որոնք դօրաւոր նախարարներ էին և իրենց պաշտօնն էր Հայաստանի սահմանները պաշտպանել: Բգեշխներ էին Սիւնեաց, Գուղաբաց, Աղձնեաց և Կաղմեանց իշխանները:

Հայ նախարարներու թիւը առաջ 70-ի շափէր, բայց քրիստոնեայ Արշակունիններու օրով անոնք շատցան, որովհետեւ Արշակունի թագաւորները սովորութիւն ունէին իրենց լաւ ծառայութիւն մը ընողին հօգեր տալու և նախարարութեան աստիճանին բարձրացնելու:

Այնպէս որ, քրիստոնեայ Արշակունիններու օրով երկիրը բաժնուեցաւ մանք մասերու: Այս նախարարութիւններուն ամենէն հիներն էին Սիւնեաց և Աղձնեաց բգեշխութիւնները, որոնցմէ յետոյ կողային Մամիկոննեաններու, Բաղրատունիններու, Արծրունիններու, Խորխոռունիններու, Կամսարականներու և Մոփաց ու Մոկաց նախարարութիւնները:

Նախարարին իշխանութիւնն ալ ժառանգական էր, անդրանիկը հօրը կը յաջորդէր:

Նախարարութիւնը պղտիկ թագաւորութիւն մըն էր: Նախարարը ունէր իր ամրոցները, դօրքը և շատ անդամ իրարու գէմ կամ թագաւորին

դէմ կոլուի կ'ելլէին։ Այս դրութիւնը Հայաստանի Տէղարութեան զիխաւոր պատճառներէն մէկն էր։

Նախարարը կը կառավարէր իր երկիրը և պարտաւոր էր տուրք և զօրք տալ թագաւորին։

Թագաւորը կրնար օրէնքներ դնել, բայց նախարարներն ալ իրենց երկիրին մէջ օրէնքներ կը դնէին։ Դատական իշխանութիւնը հոգեւորականներուն կը պատկանէր, բայց նախարարներն ալ ունէին այդ իրաւունքը։ Ամենամեծ դատաւորը թագաւորն էր։

Ամէն նախարար իր սեփական դրոշակն աւնէր, Թագաւորն ալ ի՞րը։

Նախարարները պարտաւոր էին երգումավ հաւատարմութիւն ուխտել թագաւորին, Թագաւորն ալ կը խոստանար տէր և խնամակալը լուալ անոնց։ Երդման խորհուրդը աղն էր։

Երբ նախարարները թագաւորին քով հաւաքուէին իրենց որոշ տեղերը՝ բարձերը՝ ունէին։ Առաջին բարձն ու պատիւը Սիւնեաց իշխանին էր, երկրորդը՝ Բաղրամունեաց, երրորդը՝ Արծրունեաց, չորրորդը՝ Մաղլսաղին, հինգերորդը՝ Մամիկոնեանց, ևն։

Նախարարութիւնները մնացին, մինչ Արշա-

կանեաց թագաւորութիւնը կործանեցաւ։ Անոնք մեծ զեր խաղացին նաև Միջին Դարերու մէջ և շարաւնակեցին մնալ մեր պատմութեան առանցքը։

Քաղաքացին եւ զիւղացին. — Քաղաքացին ները կ'ապրէին քաղաքներու մէջ և կ'զբաղէին առեւտուրովու արհեստներով։ Բայց, ինչպէս հիմա, առաջ ալ հայ ժողովուրդին մեծ մասը կ'ապրէր զիւղերու մէջ և կը զբաղէր հողագործութեամբ ու անասնապահութեամբ։ Այս դասը կը կոչուէր շինական։ Աւնէին իրենց զիւղապետները և հարկատառ էին նախարարներուն, իսկ ասսնք ալ՝ թագաւորին։ Հարկերը կուտային հում նիւթերով նաև աշխատանքով։ Պետութեան հասոյթներուն ծանրութիւնը շինականին վրայ ինկած էր։

Սովորութիւնները. — Հայոց թագաւորները, նաև իշխանները, շատ կը սիրէին որսորդութիւնը, որուն համար նոյնիսկ մասնաւոր անտառներ պատրաստել կուտային և որսի կենդանիներով կը լեցնէին։ Մեծ բազմութեամբ կ'երթային որսի, որ երբեմն ալ ոճիրով կը վերջանար։

Քրիստոնէութենէ առաջ, թաղաւորներն ու իշխանները բազմակին էին, բայց թաղուհին մէկ էր։

Հարսանեկան և թաղման հանդէսները շատ
փառաւոր կ'ըլլային:

Հեթանոսութեան ատեն մանսուանդ, Հայոց
մէջ տարածուած էր վրիժառութեան սովորու-
թիւնը, թանցաւորը շատ անգամ կը յանձնէին
սպաննուածի տիրոջ դատաստանին: Քրիստոնէ-
ութիւնը աշխատեցաւ վերջ տալ Հայոց հին,
բարբարոսական սովորութեանց:

Եկեղեցին. — Հեթանոսութեան ատեն
քուրմերը մեծ ազգեցութիւն ունէին երկրի զոր-
ծերուն մէջ: Հին մեհեանները ունէին մեծամեծ
կալուածներ և հարուստ էին:

Երբ Հայեր Քրիստոնէութիւնը ընդունեցին և
մեհեաններու աեղ բարձրացան եկեղեցիներ ու
վանքեր, այս վերջինները շատ աւելի հարստա-
ցուն և հոգեւորականներու ազգեցութիւնը աւելի
մեծցաւ:

Մինչեւ Պատ թագառորը Հայոց կաթողի-
կոսները կեսարիոյ յոյն մետրոպոլիտէն կ'ստա-
նային իրենց բարձր աստիճանը: Բայց Պատ
վերջ առւաւ ատոր: Հայոց եկեղեցին անկախ ե-
ղաւ:

Հայոց կաթող իկոսները մինչեւ Սահակ Պար-
թեւ հայրապետը, Լուսաւորչի ցեղէն կ'ըլլային,

(հին առեն մինչեւ իսկ կաթողիկոսները կ'ա-
մուսնանային)։ Կար նաև ուրիշ նշանաւոր ցեղ
մը՝ Աղբանոսի առնը՝ որ Լուսաւորչի ցեղին
մրցորդն էր։ Լուսաւորչի ցեղէն կաթողիկոսները
յունասէրներու կողմը բռնեցին միշտ, իսկ պարս-
կասէրները կ'ուղէին որ Աղբանիոսի առնը բաղ-
մի կաթողիկոսական աթոռին վրայ։

Լուսաւորչի ցեղին վերջանալէն յետոյ կա-
թողիկոսները սկսան ընտրուիլ, առաջ յաջոր-
դութիւնը ծառանզական էր։

**ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒԻ
ՄԱՍՆ Ա.**

Դաս. Ա.	Հայաստան հայերէ առաջ —	էջ 5
"	Նախը - Աւրացու բաղաբական	
" Բ.	Դայոց պատմութիւնը	8

ՄԱՍՆ Բ.

" Գ.	Հայոց ծագումը	11
" Դ.	Հայաստան, Հայոց զլաղումը	13
" Ե.	Հին Հայոց կրօնքը	15
" Զ.	Հայաստան Մարաց, Պարսից եւ Սելեւկեան իշխանութեան տակ	17

ՄԱՍՆ Գ.

" Ե.	Արտաւեստան Հարստութիւնը — Արտաւեստ Ա.	19
" Ֆ.	Տիգրան Գ. Մեծը	
" Փ.	Մեծն Տիգրանի պատերազմները	25
" Ժ.	Տիգրանի Կայսրութեան բայցայումը	28
" ԺԱ.	Արտաւազդ Բ. . . .	33
" ԺԲ.	Արտաւազդ եւ Անտոնիոս	36
" ԺԴ.	Արտաւեստան Հարստութեան կործանումը եւ օսար բազաւորմեր	38

ՄԱՍՆ Դ.

" ԺԴ.	Արշակունեաց Թագաւորութիւնը — Տրդաս Ա.	41
" ԺԵ.	Տրդասէն մինչեւ Խոսրով Բ. . . .	
" ԺԶ.	Սասանեանները եւ Հայերը	49
" ԺԵ.	Քրիստոնեութեան մուտքը Հայաստան Տրդաս Գ. եւ Ա. Գր. Լուսաւորիչ	52
" ԺԲ.	Հայաստան Քրիստոնեութիւնը ընդունելէ յետոյ	55
" ԺԹ.	Տրդաս Գ. ի յաջորդները	58
" Ի.	Արշակ Բ. . . .	61
" ԻԱ.	Արշակի եւ Փառանձեմի մահը	65
" ԻԲ.	Պապ	67
" ԻԳ.	Արշակ եւ Վաղարշակ — Հայաստանի Ա. բաժանումը	69
" ԻԴ.	Հայաստանի Երկու Թագաւորութիւնները	72
" ԻԵ.	Գիրերու գիւտը	75
" ԻԶ.	Արշակունեաց Թագաւորութեան անկումը	79
" ԻԵ.	Հայոց ներքին կեամքը	81

ԳԱԱ Երևանաբար Գիտ. գրա



FL0568923

[In. 204]


U. 1070

Հասցե

L. ADJÉMIAN

Rue Salah-el-Din No. 35

Héliopolis Caire (Egypte)



PRINTED IN EGYPT BY
SAHAG - MESROB PRESS
25 RUE TEWFIK CAIRO